

3372

Գ. Ա. Բ. Ա. Մ. Ա. Խ. Ա. Ե.

Ն Ո Ր

Ա Ա Կ Կ Ա Ք Ա Վ Ա Ղ

ՀԱԻԱՔԱԾՈՅ

Ա. Շ. Խ. Ա. Ր. Հ. Ի. Կ. Լ. Ե. Զ. Ջ. Ա. Ի. Ա. Ի.

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Զ Ա Բ Դ

B. TALENTZ

Գ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ Ա. Ր. Տ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՀԱՄԱՉԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ



Կ. Պ Ո Լ Ի Ս

ՀԱՅԱ-ԲՈՒԹԻՒՆ. Յ. ՄԱՍԹԵՎՈՍՅԱՆ

1898

491. 99-8

9-13

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1. **ՓԵԶՔԻ,** Պատկերազարդ նախնական Հաւաքածոյ, աշխարհիկ լեզուաւ նոր և գեղեցիկ մանկական գրուածքներ, Արձակ և Ոտանաւոր, հետեւողութեամբ ՄՌԱՅԻ Արտասանուրեան գրքին: Գին 3 դանեկան:
2. **ՀԱՐԱԿԱՄՈՑ** ընտիր գրուածոց, աշխարհիկ լեզուաւ, Արձակ և Ոտանաւոր, Պատկերազարդ, Մասն Ա., Գ. Տիպ.: Գին 5 դանեկան:
3. **ՀԱՐԱԿԱՄՈՑԸ** Բ. Մասն, Արձակ և Ոտանաւոր գեղեցիկ հատուածներ, կենսագրական, գրագիտական և այլ ծանօթութեամբք: Բ. Տիպ. Գին 7½ դանեկան:
4. **ԱՌ-ՉԵՌՆ ՀԱՄԱԿԱՆԻ,** գործ բոլորովին նոր, որ ժԲ. գլուխներու մէջ 200ի մօտ նամակներու օրինակներ կ'ընծայէ աշխարհի ոճով գրուած: Գործոյն վերջին գլուխը կը պարունակէ գրականներու ընտիր նամակներ: Գին 7 դանեկան:
5. **ՆՈՐ ԲԱՌԱԿԱՐՔ ՀԱՅԵՐԼԻՆ ԼԵԶՈՒՆԻ,** բառ.ք 30,000, ոճք, նորաքանութիւնք, գաւառական բառ.եր, դիցաբանական անուններ: Սոյն գործն իր ամփոփ և դիբատար ձեւով և ճոխ պարունակութեամբ կը գոհացնէ: շատեր: Գին 15 դանեկան:
6. **ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՆ ՀԱՅ. Գ.ՐԱԲԱՄՐ ԼԵԶՈՒՆԻ.** Մեր նախնաց լեզուն դիւրաւ ուսուցանող լաւագոյն գրքերէն մին է սա իր 260 հրահանգներով և 64 գրաբար հատուածներով: Գին 7 դանեկան:

Հեղինակին հասցէն

Կ. Պոլիս, Համարուլո Խան, թիւ 24

2010

731. 93-8

Գ-13

ՆՈՐ

Կ. ՇԱՀԱԿԱՔԱՆ

ՀԱԿԱՔԱՆՈՅ

Ա.ՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒՆԻ

(36/197)



ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ Ա.ՌԱՍԱՍՆՈՒԹԵԱՆ

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆՎՐԻ ՀԱՄԱՉՅՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԱՆ



Կ. ՊՈԼԻՍ Պ. ՊՈԼԻՍ

1898

ՅԱՌԱՋԱԲՈՆ

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ

ԵԽ ԹՂԹԱՎԱԶԱՌԱՆՈՑ

Յ. ՄԱՍԹԵԿՈՍԵՍ. Դ.

27, Ֆիճնանհելար եօգաւու, Կ. Պոլիս:

Նախնական կարգերու համար նոր ծաղկա-
քաղի մը պէտքը փորձով տեսնելով՝ պատրասեցի
սոյն դասագիրքս, կազմական կանոնագրի ցոյց
տուած ուղղութեամբ ու եւրոպական վերջին
հրատարակութիւններէ օգտուելով։ Այս գործիս
մէջ աւելի փոյք ունեցայ շատ հատուածներ ամ-
փոփել. այդ պատճառաւ զանց ըրի նիւթերու
ընդլայնումներ, վերլուծութիւններ դնել, այս
աշխատութիւնները մեղաւաշան ուսուցչին յանձ-
նելով։

Վատահ եմ թէ սա՛ եւս ընդունելութեան մա-
սին պիտի արժանանայ, իբր արտասանութեան
եւ ընթեցանութեան նախնական դասագիրք մը,
իմ հրատարակութիւններուս բախտին։

Ա. Պ.

29853 - Ա. Ի.

13567-58

معارف عمومیه نظارت جیله سنك ۲۱ صفر ۳۱۶ و ۴ تموز ۳۱۴
تاریخی و ۳۴۱ نوسروی رخصتات و مسیله طبع او لشدر

Նախնական կարգերու յարմարադոյն դասագիրքերէն մին և
«ՓՆՁԻԿ»ս։

ՆՈՐ

ԾԱՂԿԱՓԱՂ

1. Ի՞նՉՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ է ԱՇԽԱՏԻԼ.

ՈՒԵԺՔ է դպրոցին մէջ լաւ աշխատիլ շատ
մը պատճառներով։

Որովհետեւ ուսանողին աշխատութիւնը կ'ու-
րախացնէ հայրն ու մայրը և թէ ասի միջոց մ'է
անոնց ապացուցանելու այն երախտագիտութիւնը՝
որուն իրաւունք ունին։

Որովհետեւ ամէն մարդիկ աշխատելու սահ-
մանուած են և թէ կարեւոր է մանկութենէ աշ-
խատութեան վարժուիլ։

Որովհետեւ առանց աշխատութեան չիկայ
կրթութիւն, և թէ առանց կրթութեան անկա-
րելի է տեղ մը զրաւել մարդկային ընկերութեան
մէջ։

Որովհետեւ աշխատութեամբ է որ մարդ պի-
տի կրնայ օր մը իր ծնողքին օդնել։

2. ԱՌ ՈՒՍԱՆՈՂ ՈՄՆ

Յուղորակ

Ժամը զարկաւ թի՞ն թի՞ն թի՞ն . . .
Մի՛ նայիր աստին անդին . . .
Արեւ կ'ենէ կը մտնէ
Միշտ անօդուտ պղերգին :

Աղքատն ըսէ . «Հա՛ց , հա՛ց , հա՛ց» .
Տո՛ւր , Աստուած է ողորմած .
Բայց թէ տըղայն աշխատի ,
Չըլլար կարօտ օտարաց :

Սըրտի մէջը յոյսն է լոյս ,
Մի՛ մինիր յուսակորոյս ,
Գիտութիւն՝ տունկ բեղմնաւոր ,
Տըգիտութիւն մի ժանտ բոյս :

Տե՛ս մեղուներ բոյլ ի բոյլ ,
Տե՛ս թռչուններ հոյլ ի հոյլ .
Սիրեն ամենքն աշխատիլ ,
Անբանք անդամ ոչ են ծոյլ :

Օրեր կ'ըլլան տարիներ ,
Փոքրիկ մանկունքը ծերեր .
Խաղա՛ , խնդա՛ , բայց երբեք ,
Տըղա՛ս , գործէ մի՛ խուսեր :

3. ԲԱՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆԸ

Գամեր առտուն կանուխ կ'ենէ : Կը բարեւէ
իր հայրը , իր մայրը , իր պզտիկ քոյրը : Կը ներկէ
իր կօշիկներն և կը խոզա-
նակէ իր հագուստները : Կը
լուայ իր գէմքը , իր վիզը
և իր մարմինը : Մանտով կը
շտկէ իր մազերը : Կը մաքրէ
իր ձեռքերն ու եղունգները :

Գամեր կը նախաճաշէ և
իր դասին վրայէն կ'անցնի :
Դպրոց կ'երթայ և ժամա-
նակէն առաջ հոն կը հասնի :
Դասին մէջ իր ուսուցչին բոլոր ըսածներուն մտիկ
կ'ընէ : Մտադըռութեամբ իր աշխատութիւնը կը
կատարէ : Աղտոտ չեն իր գիրքը և տետրակը :
Զբոսանքի ատեն իր ընկերներուն հետ կը խաղայ :

Երբ դասը լմնայ , Գամեր առանց փողոցը
կենալու տուն կ'երթայ : Մա բարի դպրոցական մ'է :

Իր հայրը եւ մայրը երջանիկ են ասանկ զա-
ւակ մը ունենալնուն համար : Ուսուցիչը մեծ գո-
խունակութիւն մը կ'զգայ տեսնելով արագ յա-
ռաջդիմութիւններն այս աշակերտին՝ որ իր բոլոր
ընկերներէն սիրուած է :





4. ՎԱՀՐԱՄ

Անուշ աչքեր , խնձոր այտեր .
Սիրուն Վահրամ , անունն այդ էր .
Զըւարթ կ'երթար մանկապարտէզ ,
իր ձեռքն առած գրքերու դէզ :

Կ'երգէր գարնան ինչպէս թռչնիկ ,
Խաղար , պարէր , ինք երջանիկ .
Հոն կը շահէր մրցանակ շատ ,
Սշխատանքէ չէր յուսահատ :

Վշտի արցունք թող չը կաթեն
Իր անուշիկ աշուկներէն ,
Թիթեռնիկի սէս նա զըւարթ
Թըռչւտի թող միշտ վարդէ վարդ :

Վաղը մեծնայ մեր Վահրամիկ ,
Իրմալ խնդան հայր , մայր , մամիկ .
Իր ասլագան փայլի պայծառ ,
Եւ թող ըլլայ սլողատու ծառ :

5. ՊէՏՔ Է ՍԻՐԵԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Դու կը տեսնա՞ս , Թոռնիկ , թէ մարդիկ ի՞նչ-
պէս կ'աշխատին երկրիս վրայ : Գիւղացին իւր հո-
ղագոյծութեան մէջ վարած արտին ակօմներ իւր
քրտինքով կը թրջէ , քաղաքացին իւր արհեստով
դարձեալ նոյն քրտինքը կը թափէ : Դու տեսնել ես
դարբնին թափած քրտինքը , որ բորբոքուած հնո-
ցին դիմաց կեցած կիսամերկ , ահագին կռանով
երկաթ կը ծեծէ , և մեր գութանին համար խոփր
կը պատրաստէ : Վաճառական՝ ծովու և ցամաքի
վրայ ճամբորդելով , աշխարհէ աշխարհ կ'երթայ ,
կը տառապի և նոյն քրտինք կը թափէ : Ճես հնձող
մշակը ցորենի խուրձ դլխուն դրած անուշ կը քնա-
նայ բացօթեայ դաշտին մէջ և իւր անկողինը իր
մշակած կակուղ հոյն է : Ո՞հ , քանի գառն , քանի
գժուարին աշխատութիւն է այն գործաւորաց հա-
մար , որ հինգ հարիւր կանգուն երկրի խորութեան
մէջ , անլոյս անարեւ տաժանելի
աշխատութեամբ քարածուխ կը
հանեն , որպէս զի շոգենաւներ շո-
գեկառքեր և բովանդակ մեքե-
նական գործարանները բանին ան-
դադար :

Այսպէս , աշխարհիս վրայ ա-
մէն կարգի և աստիճանի մարդիկ թէ առաւել թէ



Նուազ քրտինք թափելու դատապարտուած են,
որով աստուածային վճիռը անվրէպ կը տարածուի
բոլոր մարդկութեան վրայ, այն է «Քրտամբք երե-
սաց քոց կերիցես զհաց քո»։

6. ՀԵՔ ԱՅՐԻՆ

Սեւ էր հագեր եւ ոտքերը րոպիկ էր .
Մաղերն ցանցաւ, աչքերն ալ ի՞նչ փոքրիկ էր .
Այտից վըրայ դալուկ մըն էր մահաքուն,
Գերեզմանի ոգիի պէս էր կանգոն :
Եկեղեցւոյ վըրան սեմին կրթընած ,
Ա՛հ, տաքէն թէ ամօթէն էր քրտընած :
Անցորդներուն ձեռք կարկառէր տիրագին .
Բարէ՛, սըրտէն արդեօք ինչե՛ր կ'անցնէին :
Մէկ մ'ալ յանկարծ կանգ առաւ մին անցորդաց ,
Պիշ պիշ նայուածք մըն նետելով դողդըղաց .
«Դուք հո՞ս, տիկի՞ն, այս բան չի՞ ձեզ մեծ ամօթ ,
«Որ ձըգելով ձեր ապարանք ճոխ փարթամ ,
«Մուրիկներու խմբին ըլլաք հոս անդամ» :
— «Լո՞ւս, մընչեց կինն, գլնելով չափ մ'իր լալեաց .
«Զաւակս մահու մանկերէն է բըսնուած ,
«Անոր համար ուխտած եմ որ մուրալով ,
«Զորս մոմ վառեմ» : Եւ կը հեծէր նէ լալով :

Երկու տարի, աւա՛լ, հազիւ էր անցած
Հողակոյտի մ'առջեւ ամբոխ մ'էր դիզուած :
Դամբանականք դղրդէին մահուան երգ ,
Հէ՛ք կինն ալ հոն կը խառնէր զիւր եղերերդ .

7. ԲԱՐԻ ՊԶՏԻԿ ՏՂԱՅ ՄՀ

Վերջին անգամ առաւօտուն շատ կանուխ պատահեցայ պզտիկ տղու մը՝ որ զիւղէն կը դառնար , իր պզտիկ բազուկները տանելու շափ բեռնաւորուած չոր փայտերով։

Իր բարի կերպարանքը զինքը առաջին տեսութեամբ համակրելի կ'ընծայէր :

Հարցուցի անոր .

— Ուրկէ՞ կուգաս, պզտիկ, այսքան կանուխ :

— Անտառէն, պարոն, ուր փայտ ժողվեցի մայրիկիս համար :

— Դուն շատ յոգնած ըլլալու ես :

— Ո՛հ, ոչ, պարոն, ես արդէն զօրաւոր եմ, վեց տարու եմ :

Եւ յետոյ, մայրիկս շատ կը նեղուի իմ պըզտիկ եղբայրս և քոյրս խնամելով և ես անոր կ'օգնեմ :

Գրկեցի զանի, բոլորովին յուզուած և ըսի ինքնիրենս . ահա ազնիւ տղայ մը, կը սիրէ իր մայրը, ասիկա պարկեշտ մարդ մը պիտի ըլլայ :

Տղայք պէտք է օգնեն իրենց ծնողքին անոնց աշխատութիւններուն մէջ :



8. ԽԵՂԾ ՈՒՍԱՆՈՂ

Դեռ հազիւ կայ տասնեւութը տարեկան .
Հզգայուն սիրու , դէմքըն աշխոյժ է այնքան .
Տանեաց ներքեւ բնակարանն է մի անկիւն .
Ուր ձըմեւուան լըսուի միայն մըպնչիւն :

Եթէ հնացած մի զգեստ ունի , գիշերուայ
Վերմակ կ'ըլլայ , որուն ներքեւ կը դողոյ .
Այլ ցերեկին ադով ենել կ'ամաչէ ,
Սյոյ պատճառով նա ամենէն կը փախչէ :

Զի գլուրոցի վերատեսուչն ըսեր էր՝
Որ այն լաթով զանի գլուրոց ըլնդուներ .
Նա ալ սաստիկ յուսահատուած հեռացաւ
Քաղցած փորով , հոգին տըրտում , սիրտն ի ցաւ :

Խեղճ ուսանողն կը պատրաստէ ապադայ ,
Մինչ ներկայում նեցուկ պատառ հաց ըլկայ ,
Անցելցն մէջ նա որբ մընաց իր ծնութէն ,
Իսկ այժմ , աւա՛լ , մուցուած է ամենէն :

Մուացութեան ժայռին ներքեւ բողոքածած
Նա մի բոյս է , պարտէզներէ արտաքսած .
Մի՛ կոխոտէք դէթ նորափթիթ այդ բուսիկ՝
Որ վայելէք ապագայում իր բարիք :

(Քերուածի)

Պ. 2. ԱԴԱՄՍԱԿ

9. ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Պետրոս Պուրեան ծնած է 1831 մայիս 20ին ,
Խւսկիւտարի Ենի-Մահալլէ թաղլին մէջ աղքատ
ընտանիքէ : . . .

Դպրոցակը և կրօնասէր եղած է իր ամբողջ
մանկութեան ատեն : Օր մը չէ դժկամակած գըպ-
լոց երթալու և ընթերցումը խանդաղատանքով
միրած է . իր բարեպաշտութիւնն ալ , զոր իր ըն-
տանիքէն ժառանգած էր , ամուր մնացած է իր
մէջ : Դպրոցական եղած միջոցին , յաճախ տեսած
են զինքը , որ առտուն գլուրոց երթալէ առաջ եկե-
զեցին հանդիպած , մոմ մը վառած և աղօթք
մը ըրած է :

Իր նկարագրին գալով , չափազանց զուարթ
էր , զուարճաբան , կատակասէր , միշտ ըրթունքին
վրայ երգ մը , ելրէք երեսը կախած : «Երբ սեն-
եակին դուռը աղմուկով բանալով ներս մտնէր ,
կ'ըսէ իր մայրը , ուրախութիւնը հետը կը բերէր .
Կ'երգէր , կը խնդար , ասոր անոր հետ կ'իյնար .
Արտերնիս կը բացուէր զինքը տեսնելով» : Դպրոցին
մէջ իր կարգին զուարթութիւն էր . ինք էր կա-
տակաբան , չարաճճի աշակերտը , որուն կատակ-
ները թունալից չեն սակայն , որուն չարաճճիու-
թիւններն անմեղ են . իր բոլոր բարեկամները ,
որոնք կը հաւաստեն իր անսպառ զուարթութիւ-

նը, կը հաստատեն նաեւ իր ամնման բարութիւնը, հեղութիւնը, համբոյր ու շնորհալի վարքը։ Մէկը վտացուցած չէ երբէք. ատելութիւնը, ովը, նախանձը, բամբառանքը անծանօթ մնացած են իրեն, ինչպէս և ամբարտաւանութիւնը, յանձնապաստանութիւնը։ Համեստ, խոնարհ, սիրող ու ներող հոգի մը, սսկի քնար՝ որուն կոյս թելերուն վրայի այն կրնային թրթռալ այն մաքուր երգերը։



10. ԲՈՅՆԸ

Ի՞նչ կ'ընէիք, անգութ արղաք, կը քանդէիք բոյնն այն սիրուն. Սրդեօք բընաւ մայր չունեցա՞ք Որ կը մոռնաք զայն այս պահուն :

Շիկահաւի բոյն մ'է զըւարթ . Կակուլ օրրան, տընակ քընքուշ, Ուր հէք մայրիկն այն անհանդարտ Զետեղած է իր բեռն անուշ :

Զընաղ արդիւնք գորովանքի . Գրտէ՞ք, ի՞նչպէս են զայն հիւսեր, Ո՛րչափ թռչունն այն վանաքի Վատներ է օր, հընարք ու սէր :

Օրրաններուն է՞ն սըխրավին Քակել կ'ուզէք, անգութ արղաք, Գրտէ՞ք, ձեզ պէս մայրիկ մ'ունին Թըռչուններն ալ, զոր կը գողնաք :

Թարգմ. ԶԱՐԵՒ Կ. ՏՕՆԻՎԱՆ

ԼՈՒԻ ԹՈՒՌՆԻԷ

11. Գ Ա. Ռ Ո Ւ Ն

Հապա, երթանք դաշտը, տեսնենք ի՞նչպէս կը մեծնան ծաղիկները. մտիկ ընենք սա թռչուններուն ճիւճիւր, խաղանք սա նոր բուսած խոտերուն վրայ :

Չմեռը անցեր է. ծառերը կը ծլին. դեղձին վարդեգոյն ծաղիկը կը բացուի, տերեւները կը կանաչնան. օջոշն բլուրներու ձորերու մէջ կը փռուի, մանուշակը չուքի տակ կը պահուըտի ու անուշ հոտը կը ձգէ :

Հաւը իր հաւկիթներուն վրայ նստած՝ ժամէ ժամ կը սպասէ, թէ երբ պիտի դայ այն ատենը՝ որ կտուցովը հաւկըթին կճեպը կոտրէ ու իր սիրուն ձագերը դուրս հանէ :

Նոր ծնած գառնուկները մարմանդին վրան
են, հաղիւ թէ կրնան իրենց տկար ոտքերուն վրայ



կենալ, ու մօրերնուն քով կը դողդըղան։ Սիրուն
գառնուկներ, թէ որ դուք ընկնիք ալ՝ չեք ցաւիր,
վասն զի գետինը փռած է մէկ կակուղկեկ կանաշ
կապերտ մը։

Թիթեռնիկները թեւերնին արեւուն բացած
ճիւղէ ճիւղ՝ ծաղկէ ծաղկիկ կը թռչըտին։

Ամէն նոր ծնած ձագերն ալ երջանիկ են,
ամենն ալ ասդին անդին ցրուած կը խաղան կը
խնդան ու փառք կուտան Աստուծոյ որ իրենց
կեանք տուաւ։

Անոնք միայն որտով կրնան ճխալ, մենք աս
բաղդն ալ ունինք որ բերնով ալ կ'օրհնենք զինքը։

Թուշունները կը ճըւճըւան, գառնուկները կը
մայեն, բայց մենք միայն կրնանք Աստուծոյ բա-
րիքներուն վրայ խօսիլ։

Ուրեմն փառք ասանք ու օրհնենք զինքը ան
արարածներուն բերնէն ալ որ լեզու չունին։

Ծաղկած ծառեր, պղտիկ գառնուկներ, թէ
որ լեզու ունենայիք ՞ըշափ Աստուծոյ բարութիւնը
պիտի գովէիք։ բայց դուք լեզու չունիք, մենք ձեր
տեղը կը խօսինք։ Ամեն լերան վրայ, ու ամեն
կանանչ գեանի երես՝ մենք ձեր տեղը անոր չոր-
հակալ կ'ըլլանք։

(Յոյց Աստուծոյ)

Հ. Դ. ԱԼԻՇԱՆ

1888
3619X

12. ԿԱԹՆԱՎԱՃԱՐ ԿԻՆՆ ՈՒ ԿԱԹՆԱՄԱՆ

Բէրրէդ՝ գըլխուն վերեւ կաթի աման մը բարձած,
կաւ մը բարձով հաստատած,

Հանգիստ ու անտրգել քաղաք հասնիլ կը կարծէր.

Կարճ ու թեթեւ ըզգեստով առաջ կ'երթար մեծաքայլ.
Դիտմամիւ արագ շարժելու՝ նոյն օրն արդէն հագածն էր
Բածկոն, կօշիկ պարզ անփայլ,

Հանգրիմածեւ ինքն ասանկ,

Հաշիւ կ'ընէր ո'րչափ գանկ,

Զեռքը կուգար իր կաթէն. անոր բերած ըստակով
Հարիւր մ'հաւկիթ կը գնէր, թուիս կը գնէր երեք հեղ,

Եւ բանն աղէկ կը յաջողէր իւր մըստագիր խընամով :
 «Ինծի համար դըժուար չէ ,
 Կ'ըսէր միտքէն , տանըս բոլոր վառեակներ մեծցլնել .
 Ճարափիկութեամը՝ մընացածով ես կըրճար իսով մը գնել .



Դիւրին է զինքն առանց մեծ ծախք մը բանալու գիրցընել :
 Գնած ատենէս լաւ մը լեցուն էր արդէն ,
 Կըրնամ կըրկին ծախելով՝ աղէկ ըստակ ձեռք բերել .
 Եւ ո՞վ կրնայ զիս արդիլել որ ախոռին մէջ ստահեմ
 Կով մը հանդերձ իր հորթով՝ եթէ ձեռք տայ դիներնին ,
 Որոնց հօտին մէջ հոս հոն պիտի տեսնեմ ցատքելնին » :
 Ասոր վըրայ ինքն ալ բէրրէդ վեր կը ցատքէ խընտումով ,
 Կը թափի կաթն . երթան բարո՞վ թուսս , վառեակ ,
 Խով , հորթն ու կով :

(Բազմավիայ)

Լ.Ա.ԹՈՆԹԵՆ

13. ԶՈՒՐԸ , ԿՐԱԿԸ ԵՒ ՀԱՄԲԱԿԸ

Օր մը , Զուրը , Կրակը , և Համբաւը ի միա-
 սին ճամբարդելով որոշեցին թէ ի՞նչպէս պիտի
 կրնային զիրար դանել եթէ մէկզմէկ կողանցնէին :
 Կրակը կ'ըսէ . « Զիս պիտի դանէք որ որ
 ծուխ տեսնէք » :

Զուրը կ'ըսէ . « Ուր որ ճախճախուտ տեղեր
 տեսնէք , զիս անոնց մէջ պիտի դանէք » :

— « Եւ ձեզ , կ'ըսեն Համբաւին , մը որ պիտի
 դանենք » :

— « Երբ մարդ անդամ մը զիս կորսնցուց ,
 Կը պատասխանէ ան , ալ երբեք չգտնեմ » :

14. ԽԱԲՈՒԽԾ ԿԱՐԱՊԸ

(Հնդկական նմանողութիւն)

Գանդէս գետին վրայ՝ զիշեր մ'անաղօտ՝
 Կարապ մ'ի քուն լրւա կը սահէր ի լող .

Զինջ հայելոյ պէս հոն ալին իւր մօտ
 Ցոլացնէր մի ասող երկնից խորն փայլող :

Այդ տեսքէն խարուած՝ անյագ՝ կանգնի վեր ,
 Կարծելով տեսնել մի հիւթեղ անփար .

Մօտի եւ խածնէ , խածածն է ըստուեր ,
 Ճանչելով ոըխալն անցնի տըրտմաբար :

Ուրիշ օր մ'ալ ջուրց վրայ յամի ու յըստակ՝
Հանդիպի տունկին այդ հրաշատեսակ,

Ու անոր բաժակին կ'ըզգայ բոյրն ընաել.

Բայց՝ արհամարհոս աչերն փակելով
Մըրմընչէ . «Ի բա՛ց , չե՛ս կրնար խարել .
Այս երկրորդ անգամ հոգիս անվըրդով» :

Թարգմ. Եղիշե Խ. Գ. Դուրինսչ

ԷԼԻ ԳԱԲՐՈՒ



15. ՊԶՏԻԿ ԲԱՐԻ ԱՂՋԻԿԸ

Նուարդ չորս աարու է . իրմէ քիչ մը մեծ
Երկու քոյրեր ունի : Մայրը , որ այրի է , դաշտերը
Կ'աշխատի և շատ քիչ բան կը շահի : Երեք պղտիկ
աղջիկները չունին միշտ իրենց պէտք եղած հացը .
անոնք շատ խեղճ կը հագուին և խրճիթի մը մէջ
կը բնակին :

Իին մը , անոնց գիւղէն անյնելուն , հրապու-
րուելով նուարդին աղնուութենէն , տրամադիր էլ
զանի իր քով առնուլ : «Կ'ուզմս ինձ հետ գալ ,

կ'ըսէ անոր , դուն հագուստներ կ'ունենաս և ա-
զէկ պիտի զբօնուս » :

Պղտիկ աղջկան դէմքը յանկարծ փոխուեցաւ .
անիկա իր երկու մեծ քոյրերուն փարեցաւ այն-
պիսի կերպարանքով մը՝ որ այսպէս կընար թարգ-
մանուիլ . «Աւելի աղջէկ կը սեպեմ թշուառութիւնը
իմ մօրս և քոյրերուս քով , այն հարստութենէն
և ուրախութիւններէն զորս անոնց հետ չպիտի
վայելեմ» :

16. ՈՒՍՍԱՆՈՂԻ ՆՍՄԱԿԻ

Պատուակա՞ն հայրիկ , սիրելի՝ մայրիկ ,
Աստուած ձեզ տայ կեանք եւ հազար բարիք .
Զեր ձեռքերն աշեր սիրով կը պաշեմ ,
Պանդրիստիս կարօտ արցունքով թըրջեմ :
Այ մի տարի կայ ձիչդ՝ որ հեռացայ ,
Զեր տեսութենէն ես զըրկուեցայ .
Այլ չէ պատահեր գէթ լոկ մի բոպէ՝
Որ ձեզ յիշելով իմ սիրտ չըտրոփէ :
Եւ միթէ հնա՞օր է ինձ ձեզ մոռանալ .
Հոգիս չէ կարող երբէք ուրանալ .
Այն խնամք որ տղիք իմ թարմ հասակին ,
Զինչ հմուտ պարտիզալն նորաբոյս ծաղկին :
Զեղանից հեռու , փափագով՝ յուսով
Օլերս եմ թըրում իր վայրկեաններով .
Եւ միշտ սպասում եմ անհամբերաբար՝
Որ արծակուրդի ժամանակը գար .

Յայնժամ՝ կը սլանամ՝ կը փութամ՝ ձեզ մօտ
եւ որդիական առնեմ զիմ՝ կարօտ :

Գիտացիր՝ հայրիկ, որ միանգամայն
Օրբս չեմ անցներ դատարկ ընդունայն .
Ահա այս կերպով շատ կարճ միջոցում
Բաւական առատ ըստացայ ուսում .
Եւ աշխատելով միշտ եւ անդադար,
Պարզեւներ առի եւ գովեստ արդար .
Շատ ծանօթութիւն դիզեցի լեզուաց,
Զանազան տարրեր բարձր իսկ գիտութեանց :
Սրդեօք գալո՞ւ է այն օրն, ո՞վ հայր իմ,
Որ ուսմամբ ձեզ եւս օգտակար լինիմ . . .
Բայց որովհետեւ նա չէ աւարտած,
Առ այժմ գէթ այստեղ օգնեմ իմ եղբարց :
Ահա վըճռեր եմ ներկայի համար՝
Ուզարկած փողիցդ խնայողաբար
Հաւաքել կազմել մի փոքրիկ գումար
Որբ եւ աղքատիկ գասընկերց համար :
Դու ալ իմս հայրիկ, թէ համակրում ես
Այս իմ սուրբ փափաք, անշուշտ կը չնորհես
Քեզանից մի նուէր խեղճ ուսանողին,
Դասրնկերներուա, որ ինձ պէս աննըման
Չունին հայր եւ ոչ միջոց զարգացման :
Մնամ ձերդ անձնըւէր հարազատ որդի,
Տալով երախտեաց համբոյրն իմ սըրտի :

(Քերուած)

Պ. 2. ԱԴԱՄԵԱՆ

17. ԱՍՏՈՒՄԾ ԱՄԷՆ ԲԱՆԻ ՊԱՇՏՊԱՆ է

Հովիւն իր ոչխարները կը հոգայ, լեցուն խու-
տով դաշտեր կը տանի արածելու, յատակ ջուրե-
րու քով կը պարացունէ . թէ որ նոր ծնած գառ-
նուկներն յոգնին՝ կանակը կամ զիրկը կ'առնէ,
եթէ ճամբան կորաընցնեն՝ իրեն կը կանչէ :

Աստուած ալ հովիւներու հովիւ է, աշխարհի
տէրն է, ինքն է հոգ տանողը ամեն բանի վրայ,
երկիրս իրեն փառքն է, մարդիկ իր հօտն են,
քոյսերը իրեն արօտը :

Մայրը կը սիրէ իրեն զաւակը, ծնկանը վրայ
կը մեծցընէ, մարմինը կերակուրով կը դարձանէ,
խելքը բան սովորեցնելով կը բանայ . թէ որ հի-
ւանդնայ՝ ալ աւելի գթով՝ կը նայի . քնանալու
ատեն քովը արթուն կը կենայ : Ե՞րբ պիտի ըլլայ
որ տղաս մեծնայ, կ'ըսէ, ու իրեն առաքինու-
թեան ճամբան կը սովորեցնէ :


Աստուած է ամեն մայրերու ուժ տուող, զի-
րենք վտանգէ աղատող, զիրենք միսիթարող ու
վրանին հոգ տանող :

Աստուած ամեն բանի պաշտպան է, վասն զի-
ամեն բան ինքն է ըրեր : Թագաւորը իրեն ժողո-
վուրդը կը կառավարէ, զլուխը ոսկի թագ դրած,
թագաւորական գաւազնը ձեռքը, փառաւոր ա-
թոռի մը վրայ նստած կը հրամմէ . ամենքը անոր

կը ծռին պատիւ կուտան . ինքն ալ ամեն աղէկ գործք ընողները կը պաշտպանէ , չարերը կը պատժէ . Աստուած է թագաւոր թագաւորաց . իր թագն է արեւը , իր աթոռը՝ աստղերու վրայ դրած է . ինքը կը հրամմէ մեղի որ ապրինք՝ ու կ'ապրինք . հրաման կուտայ որ մեռնինք՝ ու կը մեռնինք : Իր իշխանութիւնը ամեն աշխարհքի վրայ կը տիրէ . իր երեսին ընյաը տմեն արարածոց վրայ կը տարածի : Աստուած մեր հովիւն է , պէտք է որ անոր ետեւէն երթանք . մեր հայրն է , պէտք է որ զինքը սիրենք . մեր թագաւորն է , պէտք է որ իրեն հնազանդինք :

(Յոյց Աստուածոյ)

Հ. Դ. Ա. Ի. Շ. Ա. Ն.



18. Խ Պ Ի Ն Զ Ն

Անբարեկամ , անընտանի ,
Աշխարհիս մէջ իրեւ պանդուստ
Քաշուած ապրիլ առանձնակի ,
Անցընելով կեանք անօդուտ :

Սիրտը տըկած անձին սիրով ,
Տունը՝ միայն իրմով լեցուն .
Դըռնէն երեմն դուրս ելալով
Եղիւր ածել ընկերներուն .
Անցած տեղին , յայտնի նըշան
Հետքեր թողուլ . իր գարշութեան
Ոմէն ծաղիկ անուշահոտ
Թըքոտելով կանաչ արօտ .
Իր տանը մէջ բանտարկըւած
Ապրիլ , մեռնիլ որտով ցաւած ,
Սյա կննոազիր է խըզունջին ,
Նոյն եւ պատկեր ինքնամոլին :

Հ. Գ. Վ. Ա. Ի. Բ. Ա. Ն.

19. Ա. Դ. Բ. Ի. Ի. Բ. Ը.

Շատ տաք երկրի մը մէջ , փոշելից մեծ ճամբուլ մը մօտ աղբիւր մը կը վաղէր : Զուրը յստակ և զով էր ժայռերէ պատսպարտուած ըլլալով և վրան հին տառերուլ սյս զլուած բառերը կը կարդացուէին . « Զիս օրինակ առէք » :

Օր մը աղբիւրին մօտ երեք անցորդներ պատահեցան , վաճառական մը , ծեր մը , տղայ մը , և երբ խմեցին , ժայռերուն շուքին տակ նստեցան : Այս ատեն արձանագրութիւնը կարդալով ըսին . « Ի՞նչ կը նշանակէ » :

« Այս ջուրը , կ'ըսէ վաճառականը , հեռուն կը վազէ , ուրիշ վտակներ կ'ընդունի , կ'ըլլայ գե-

տակ . միշտ շարժելով անդադար կը մեծնայ , մեծ գետ մը կ'ըլլայ : Արձանագրութիւնն ըսել կ'ուզէ . գործունեայ և յարատեւող եղիք , որպէս զի հարսանաք » :

— «Ոչ , կ'ըսէ ծերը , ես ուրիշ իմաստ մը կը տեսնեմ : Բարեւար ազրիւրը կը հսսեցնէ իր զով ջուրը ծարաւած ճամբորդներուն համար : Նմանինք անոր : Միշտ պատրաստ ըլլանք օգնելու անոնց՝ որ պէտք ունին : — Եւ դուն , աղաս , ի՞նչ կը մտածես » :

Այն ատեն աղան կ'ըսէ . « Կը կարծեմ որ աղբիւրը մեզի կը խրատէ պահել մեր սիրաը այնպէս մաքուր , ինչպէս իր ջուրն յստակ է : Երբ ջուրը աղտոտ է , ոչ ոք կ'ուզէ անով թրջել իր շրթունքները : Երբ մեր սիրան ալ մաքուր չըլլայ , ոչ ոք կ'ուզէ այլ եւս մեր բարեկամն ըլլալ » :

20. Խ Ա Դ Ո Ղ Բ

Տերեւներուն մէջէն բարակ ,
Որք սընդուսի կը նմանին ,
Կուռ ողլոյզներ սեւ ու ձերմակ
Վար կը կախեն հատիկներնին :

Ոմանք երկայն , ոմանք կըլլոր ,
Մանրիկ , փայլուն եւ լուսանցիկ ,
Տերեւներուն վըրայ խոշոր՝
Կը կարծըսի բանուած ծաղիկ :

Արցո՞ւնք են թէ շաղի կաթիլ ,
Ամակին ցանցէն ցօղուած շիթ շիթ ,
Զըմբո՞ւխոտ արդեօք , վա՞րդ նորածիլ ,
Կամ ասողերէն ինկած ժըսպիտ :



Անոնք արցունք չեն , ոչ գոհար ,
Ոչ ալ ծաղիկ , ոչ ալ կիտուած .
Անուշ խաղող են զովարար ,
Միրգ , զոր միայն օրհնեց Ասոուած :

Զայն շինեցին լոյս հրեշտակներ
Նուրբ մատներովն իրենց ճարտար ,
Այգիներուն աշնան նուէր ,
Միրուն աղաք , ձեզի համար :

(Գործնական թերականուրիւն)

ԶԱԳԻՒ Ա. ՏՕՆՔԵԱՆ

21. ՀԱՆԻՒՄ ՃԱԽԱՐԱԿԸ

Ի՞նչ, մթին ու տխուր նրբուղիի մը մէջ ձգել
ու աշքէ անտես ընել կ'ուզէք այս հինաւուրց
ճախարակը, զոր պայծառ արեւը պատուհանէն
կը լուսաւորէ իր ոսկի ցորքերով։ Զգիսէք դուք
թէ անոր մօտ նստած պահուս՝ երբեմն ի՞նչ ա-
նուշ երազներով օրօրուած է հողիս։

Հանիս ճախարակն է ան. կարծես դեռ աշ-
քիս առջեւն է որ թէեւ պառաւ այլ իրը աշխոյժ
դործաւոր կը մանէ առաւօտէ երեկոյ։

Այս, կը տեսնեմ անոր պատկերն. ինքն է,
ճիշդ ինքն է. ահա իր միագոյն շրջազդեստն, իր
հնաձեւ գդակը, իր գեղեցիկ զլուխը ճերմակ մա-
զերով գեղեցկացած։

Ո՞րչափ ուրախ կ'ըլլար հանիս, երբ թռչուն-
ներն իրենց գարնանային մեղեդին կ'երգէին,
մինչդեռ ինք իր ճախարակը կը դարձնէր անընդ-
հատ։

կը տեսնեմ դպրոցն ուրկէ երբ ազատ կ'ըլ-
լայի և կուգայի՝ ուրախ ուրախ վեր ենել մեր
սանդուղներէն, հեռուէն արդէն խառն ի խուռան
կը լսէի այս զուարթ գեղգեղանքն և ընտանեկան
այս աղմուկն. կը մտնէի ներս. — Արդ, կ'ըսէր
բարի պառաւը, չատ խնդացի՛ր դպրոցը, դասա-
րանէն դուրս վարնառուեցա՞ր երքէք. զրկեմ քեզի,

թէ քաշեմ ականջդ : — Աչ, մեծ մայր, գրկէ
զիս, արժանի եմ։ :

Եւ դեռ՝ այտերուս վրայ կ'զգամ այս դորո-
վալից, քաղցր ու երկարատեւ համբոյրն, ու կը
կարծեմ՝ անմիջապէս յետոյ՝ տեսնել ճախարակի
անուկն միօրինակ թաւալումը։

Երբ կիւրակէն գար՝ այս հին ճախարակը՝
սպիտակ շապիկովը ծածկուած՝ առաւօտէն երեկոյ
թիկնաթոռին քովիիկը գոգցես կը ննջէր լոիկ և
հաճելի երեւոյթ մը կ'ընծայէր դիտողին։ Մեծ
Աստուածաշունչն՝ որ անպատճյն պատկերներ ու-
նէր՝ կը բացուէր այն ատեն, և չէինք զգար թէ
ի՞նչպէս կ'անցնէր ժամանակը՝ դիտելով Յակոբը,
Պաւիթը, արեւելքցի մոգերը, մանուկ Յիսուսը.
— այս երկնային մանուկին պատկերը տեսնելով
հանիս կ'սկսէր մրմիջել իր սովորական աղօթքները։

Օրեր անցնելէ յետոյ՝ երեկոյ մը՝ մտիկ ըրէ,
ըսաւ ան ինձ, կը տեսնես այս թելն, որդեակ,
ասոր կը նմանին մեր կեանքին օրերն։ Անմահ
ձեռք մը, ձեռքն Աստուծոյ՝ կարճ կամ երկայն՝
կը մանէ զանոնք իր իլին վրայ. Եցիւ թէ՝ օրեւ-
րութ թիւն՝ որ դեռ նոր կ'սկսի աճիլ, հաւասարի
իմիններուս թուոյն։ Եւ ճախարակին առջեւ՝ հա-
նիս իրար միացնելով երկու ձեռներն՝ ո՛հ, ի՞նչ
չերմեռանդ աղօթք միացուց իր այս մաղթանքին։

— Իմ օրերս անցան, աւելցուց ան նորէն,

և իմ իւս շատ մօտ է դատարկուելու . հոգւոյ խաղաղովթեամբ կը հասնիմ գերեզմանին եղրը և կ'օրհնեմ զԱստուած՝ որ ինձ պարդեւեց երկար կեանք : Երբ արդէն՝ երկար ատենէ ի վեր՝ դադրած ըլլայ աղմուկը զոր կը հանէր խեղճ հանիիդ ճախարակն , իցիւ թէ յիշելով անցեալն՝ թափէիլ մի քանի կաթիլ արցունքք :

Ով հանիս , ահա այդ ժամն . երկար ժամնակ անցած է , որկէ ի վեր դադրած է այն . . . և տես , որչափ արցունք կը թափէ թռող լքուած ճախարակիդ քավիկը :

22. ԱՌ ՄԱՅՐՆ ՈՐԴԵԿՈՐՈՅՍ

Ա՛հ , շա՛տ ըսիր այդ խեղճ փոքրիկ հրեշտակին
Թէ հրեշտակներ կան յերկին .
Թէ հոն ըլկայ վիշտ , չը փոխուիր բան մը չուա ,
Թէ քաղցր է հոն զըտնել մուտ .
Թէրկինք գըմբէթ մ'է մոյթերով հրաշալի ,
Ճոխ գոյներով վրան մը լի .
Կապոյտ պարտէ՛ ուր շուշաններն աստղեր են ,
Աստղ՝ ոչ տարբեր ծաղկներէն :
Թէ հեշտագուարձ աշխարհ՝ մ'է այն անպատում՝
Ուր մարդ դիւթուած անաըրտում՝
Քրովներ ունի ընկեր խընդի ու պարի
Ու զմեղ սիրող Տէրն բարի :
Թէ քաղցր է սիրտ մ'ըլլալ՝ այրիլ զերդ կերոն ,
Յաւերժապէս ապրիլ հոն

Սուրբ կուսին մօտ եւ մօտ մանուկ Յիսուսին՝
Զընաղ տան մէջ ի միասին :
Եւ յետոյ՝ ո'վ հէք մայր , չըսիր բաւական
Աղկաղկ՝ անո՛յշ այդ մանկան՝
Թէ դու իրենն էիր մէջ դառն այս կեանքին ,
Եւ ինքն ալ գանձդ էր անդին :
Թէ ցորչափ փոքր ենք՝ մայր մ'հսկէ մեր վըրան ,
Ցետոյ խնամել պարտինք զայն ,
Զի նէ կարօտ կ'ըլլայ՝ իւր ծեր հասակին՝
Մարդու մ'որ ի'րն է որդին :
Դու բաւական չըսիր հոգւոյն այն ըզգաստ՝
Թ'Աստուած կ'ուզէ որ մնանք աստ ,
Թէ այր ու կին պարտին միմեանց օգնել ցանգ
Մէջ ցաւերու բազմավտանգ :
Այնպէս՝ որ օր մ'ո՛վ սուգ , կորուստ անդարման ,
Խուսեց էակն աննըման .
Եղու՛կ , վանդակն ուրեմքն բաց թողիր դուն՝
Որ թռա՛ւ թըռչունըդ սիրուն :

Թարգմ. Ե. Ա. Գ.

Վ. ՀԻՒԿՈ

23. Գ Ի Շ Ե Ր

Արեւը մայրը մնաւ . գիշերուան ցօղը գետնին երեսը կը թրիէ . օդը՝ որ ցորեկը չափէ դուրս տաք կ'ընէր՝ հիմա կը պաղըշտըկի :
Ծաղիկներն իրենց խատուտիկ թերթերը կը դոցեն , գլուխնին կը ծռեն , իրենց կոթին վրայ կը կախուին :

Վառեակներն իրենց մօլը թեւին տակ կը քնանան :

Թուշոններն երգերնին դադրեցուցեր են, բոյներնին ծառերուն վրայ դրած՝ գլուխնին ալ թեւիկներուն տակը առած կը հանդչին :

Զայն մը չեղար այն փեթակէն՝ ուր որ մեռ զուները իժիր կը մանէին ու կ'ելէին, իրենք ալ թողուցեր են իրենց աշխատութիւնը, ու ամենն ալ իրեն ընկերին քով մոմէ սենեակներու մէջ կը քնանայ :

Ոչխալները իրենց կակուղ ըրդին վրայ պառեր են, ալ չի լսուիր ըլուրներու վրայ իրենց մաշելը :

Տղաքն ալ մոռցեր են իրենց խաղը, ամենեւին սոքի ձայն չկայ. ճամբանները մարդ չկայ. Դարրինն ալ չզալներ իր կուսնը սալին վրայ :

Հիւսան ողացը ճոլթոյ մ'ալ չի հաներ. ամեն արարած կը քնանան, մարդիկ ալ, անբանք ալ :

Երկինք երկիր մուժ պատեր է. գիշեր

Ո՞վ է որ առ ամեն քնացողներուն վրայ հոգ կը տանի, ու անոնց չկրցած տանը զիրենք կը պաշտպանէ :

Կայ մէկ աչք մը որ քնանալ չունի, որ առանց արեւու լուսոյ կը տեսնէ. ճամբու մէջ իրեն լուսին պէտք չէ, տան մէջ կանթեղի կարօտ չէ. Երկինքի վրայ աստղ չի փնտոեր : Առ աչքը ամեն

տեղ կը տեսնէ, ամեն մարդ կը հոգայ. առ է Աստուծոյ աչքը, որուն ձեռքը միշտ մեր վրայ է :

Աստուծած տուեր է քունը որ յոդնութիւն առնունք. զիշերը մեղի տուեր է՝ որ հանդչինք :

Իրիկունը մայրը մատը բերնին դրած՝ կամաց կամաց քաղելավ չորս դին կ'երթայ ամեն շնկոց դադրեցնելու, որ չլլայ թէ իր տղան անուշ քունէն արթննայ. անկողնին վարագոյքը կը քաշէ, ճրագն ալ կը վերցընէ որ աչքին լոյս չղարնէ :

Աստուծած ալ ասանկ մեղի համար սեւ վարագոյք մը կը քաշէ. ամեն բան կը խաղաղցնէ, որ իր մեծ ընտանիքը հանդարտ քուն ըլլան :

Հանդիսա քուն եղիք, յոդնած աշխատողներ, պղոմիկ տղայք, գուք ալ ալղաղաղցող միջատներ. Աստուծած ձեր վրայ արթուն կեցեր է. իր միշտ բաց է՝ զծեղ պաշտպանելու համար :

Երբոր մութը քաշուի ու արեւուն ճառագայթներն աչուլնուդ զարնեն՝ չնորհակալ եղիք Աստուծուները որ զիշերը զծեղ պահպանեց, Ծաղիկները բուրեն Աստուծոյ իրենց անուշ հոսք, թռչունները իրենց ընկերը չկանչոծ՝ անոր չնորհակալութիւն երգեն : Աստուծոյ անունը սրախն մէջ դրած պառկի մարդն ալ, ու ելած տանը նորէն ոկոի փառք տալ :

(Յոյցի Աստուծոյ)

Հ. Պ. Ա. Խ. Ա.

24. ՄԵՂԻՒԿԻՆ ՀԱՐՑՈՒՄԸ

Պայծառ գիշեր մը , երբ ՄԵՂԻՒԿԻ
Դիտէր երկինքը հանդարտիկ ,
«Մայրիկ , ըստ , երկնից վըրան ,
ի՞նչ են անոնք որ պլառլան :
— Անո՛ւ ՄԵՂԻՒԿԻ , ես ըսեմ քեզ .
Անոնք որ վերն , հեռուն տեսնես .
Մեր պահապան հըրեշտակին
Աչերն են որ միշտ կը փայլին :
— Սակայն , մայրիկ , ինչո՞ւ համար ,
Այդ աչերն — որ են անհամար —
Չեն երեւար ցերեկուան մէջ ,
Եւ դիշերը վասին անջչյ :
— Քանզի երբոր մենք ենք արթուն ,
Մեր հրեշտակի քաշէ խոր քուն .
Իսկ երար մենք քընանանք խոր ,
Մեզ կը հոկին աչերն անոր :

25. ԵՌԱՆԴՈՎ ԿԱՏԱՐԵՆՔ ՄԵՐ ՊԱՐՏՅԲ



Պօղոս դոհ չըլլար
մեքենաբար սովորելով իր
դասերը . ուշադիր մտիկ
կ'ընէ ուսուցին բացա-
տրութիւններուն և ջանք
կ'ընէ զանոնք հասկընա-
լու համար : Դասէն վերջը
կ'անցնի սորվածին վրա-

յէն և առիթներ կը վնասուէ զանոնք գործածելու
համար :

Անիկա եռանդ ունի :

Այս ընտիր յատկութիւնը , որ դպրոցին մէջ
առացուեցաւ , աւելի վերջը պիտի կատարելադոր-
ծուի :

Պօղոս եռանդով պիտի սորվի իր արտեսաը ,
եռանդով պիտի կատարէ իր ընտանիքի հօր և
քաղաքացիի պարագերը :

26. Ծ Գ Բ Ի Դ

Ծըղրիդըն խեղձ կանանչ ճիւղի մ'վերեւ կըկզած
Վայեր կուտար իր աննըշան վիճակին .
Մինչ թիթեռնիկըն գոյնըզգոյն հագուած սըգուած
կը թրաչտէր մէկ ծաղկէն մէկային :
— Ծաղկիներուն տեսքն իրարմէ գերազանց .
Մեր թիթեռնիկըն նոր ծաղիկ մ'էր թեւ առած : —
Ծըղրիդըն հառչեց . «Անսգորոյն դու թշնուրին ,
«Այդ ի՞նչ սրտով կամ ի՞նչ արգեօք օրէնքով ,
«Զիս այսպէս խեղձ ըստեղծելով
«Թիթեռնիկին արւիր այդչափ գեղեցկութիւն : » —
Մինչեռ այսպէս ցաւերու մէջ
կը գանգատէր ծըղրիդըն խեղձ ,
Առւմբ մը տըղաք հոն եկան ,
Զեռքեր գընտակ զաւազան :
Մէկըն կը վաղէ , միւն ալ ետեւէն ,
Բընեն , կը թողուն , կ'իյնան ու կ'ելնեն ,

Եւ ահա մէկը մէջերնէն
— «Տըղաք, կանչեց, տըղաք, հասէք,
«Եկէք րըսնենք սո թիթեռնիկ : » —



Խոկոյն ամինքն այն տըղուն
Մտիկ ըրին խօսքերուն .
Գաւազան, զընտակ,
Գըլսարկ, թաշկինակ,
Թափեցին թիթեռնիկին
Անձըրկած թշուառ գրլիսին ,

Ողողմելին զուր կը ջանար
Իր փրկութեան գտնելու ձար :
Մէկիկ մէկիկ նաշխուն թեւերն
Փետըւտեցին խեւ տըղաքներն .
Գըլուխն ոտքեր մէկդի կըտրած
Սիրոն թիթեռն ինկաւ մեռած : —
Ծըզրիզը զայն որ տեսաւ՝
Իր վիճակին փառք տըւաւ :

Աշխարհիս փայլք պատիւ յարգանք
Ունին իրենց մեծ մեծ փորձանք :

Հ. Թ. Վ. ՔՈՒՇԱՆՔԵԱՆ

27. ԱՆՁԱՒԱԿ ԵՂՆԻԿԻ

(Ա. Ռ. Ս. Ա.)

Մատաղ եղնիկ մը,
Իր բնակած այլին մէջ
Ճնած ժամանակ, չդի-
տեմ թէ ի՞նչպէս կըլ-
լայ, իր ձագեր կը մեռ-
նին, խեղճ եղնիկը կը
թողու իր մեռած ձա-
գերը, կ'ելնէ կը պարախ
լերան անտառին մէջ՝ որջի մը պատահելով կը տեսնայ
որ երկու հատ գոյլու նորածին լակոտներ անօթի
նուազած ինկած են : Գուցէ իրենց մայլ ոչխար



ուտելու երթալով չներէն խեղդուած էր, լակոտ ներ անմայր մնացեր էին։ Դժասիրտ եղնիկ մայշ ըենի գորովով խղճալով դայլու լակոտներուն վրայ, « Ի՞նչ կ'ըլլայ, ըստ, որ ես այս անտէր լակոտ ներ մնուցանեմ, քանի որ ծծելու կաթով լեցուած են, մինչեւ որ մեծնան »։

Այդ անտառի մէջ դրայի ճգնաւոր մը կար։ — « Ե՛ անխելք եղնիկ, կ'ըսէ ճգնաւոր, կը զարմանամ, դու լո՞նչպէս այդ դայլու լակոտներ կը մնուցանես, չ՞ս գիտեր որ ադոնք մեծնան, դայլ կ'ըլլան և գուցէ առաջին անդամ ձեր արիւն ծծնեն »։ « Այդ բան ես չեմ մոտածեր, այլ կը մտածեմ միայն բարիք մը ընել », կը պատասխանէ բարեսիրտ եղնիկը։

28. Կ Ի Կ Օ

Քառսուն տարի գութանն առած՝ աշխատում է անընդհատ։ Նիհար, սեւցած արեգակէն, ծեր արդէն։ Այսու հանդերձ թէպէտ հիւծեալ, շարունակէ տակաւին Խընդրել իր հաց երկրիս բերրի արդանդէն, Որն որ պատոէ՝ իր գութանին լըծելով ձի, երբեմն եզ, Ակօս ակօս բեղմնաւորէ՝ սերմանէ, Երեկոյին խըրճիթ դառնայ, աչքերն յերկինք յուսակիր։ Որ մի անձեւ տէրն իր քըրտանց հետ խառնէ։

Անձրեւն էլ գայ, արեւն էլ տայ իր կենասատու ջերմութիւն, Ու կիկոյի ճակտին վրայ միշտ խոնաւ։

Քըրտինքի մէջ, գընէ մի փայլ՝ երբ նա ժըստի սիրտը գոհ։ Գան շինականնք՝ ձեռքերն զինեալ մանգաղաւ։ Յորենն հընձել, որ դարձեր է մի ահազին ոսկէ ծով։ Ուր ծածանէ քամին փայլուն ալիքներ։ Լայնատարած դաշտում ահա լըստի մի մեղմ շշնչիւն, Խորհրդաւոր իրբեւ կենաց մի հրաւէր։

Բայց սովո, աւա՛ղ, խամրեց չորցուց կիկոյին ալ գերդաս- ինքըն թերեւս կուլ տալով իր արտասոսք՝ [տան։ Դըժբաղդաբար մնաց կենդանի, ու մի քանի ընկերով ելան մեզ մօտ եկան խեղճ ու սովլալուկ։ Մի փայտ ձեռքում՝ որ երբեմն կրէր գերանդին հասկա- եւ չնչասպաս կուրծքէն նիհար ու տըկլով՝ [քաղ։ Հազիւ լըսուէր մի ձայն տըկար, որ մըրմինջէր մամլահեար։ Գոսոտ ձեռքով կը մուրար մի հացի կտոր։

Պատըսպարուելու տըւին անոնց մի հինաւուրց անքնակ լզգաց կիկօն՝ որ ոյժը քիչ նորոգի, [տուն։ Որ օրէ օր կազդաւում է, թէպէտ սիրտը միշտ յար- գնաց ծառայել նոր հիմնարկած մի չէնքի, [տուր։ Երեկոյին վերադաւնար ընկերաց հետ տուն տըխտուր։

Երգեն տաղեր եւ ցաւալի յիշատակք . . . Մի գիշեր ալ տունը յանկարծ կործանեցաւ, եւ կիկօն Ընկերացն հետ ծածկեցին դէլք ու փլատակք։

(Քերրուածի)

Պ. Հ. Ա. Ա. Մ. Ե. Ա.

29. ՍԱՀԱԿ ԹՐՉՈՒՆԸ

(Ա.Ա.Դ.Ա.Վ.Լ.Պ.)



Թէ նորդ կուգայ այդ ձայնը : Ամբողջ հովտին մէջ
ուր որ երթառ՝ ձայնը կայ ու կը հնչէ , բայց քանի
կը կարծես թէ կը մօտենաս ձայնին , այնքան ձայնը
կը հեռանայ ու կը հեռանայ քենէ , անդադար
կը կնելով միեւնոյն մելամաղձիկ ողբերգը , Սահակ
... Սահակ ... Սահակ ... :

* * *

Կըսեն թէ այդ ձայնը յասիտենական ող-
բերդն է վիպական թռչունի մը՝ որ ժամանակաւ
մարդկային էակ մըն էր :

Յատենօք մայր մը կար , գորտվագութ մայր մը
որ միակ որդի մը ունէր , Սահակ անուն , խար-

տիշագեղ պատանետակ մը՝ որուն վրայ հոդի կուտարւ
Այնքան բուռն սիրով կապուած էր անոր հետ :
Ու մայր և որդի իրարմով երջանիկ էին , շատ
երջանիկ . . . :

Բայց , բարե՛ , այն ժամանակները սովորու-
թիւն կար որ երբ կամուրջ մը կառացուէր՝ ջու-
րերու ողիները սիրաշահերու համար կը զոհէին
այն տռաջին անձը որ նորաշէն կամուրջին վրայէն
տռաջին անգամ անցնէր : Երբ այս զոհը ըլլար՝
ջուրերը կը կատղէին և իրենց ամեհի կոհակնե-
րով շատառվ կը փլցնէին կամուրջը :

Խորտիշագեղ Սահակ՝ որ այս անգութ սո-
վորութիւնը չէր դիտեր , ուեւ օր մը , դիտելու-
գնաց այն կամուրջը որ գեռ նոր շինուած , լմցած
էր , և զուարթ , միամիտ , անցաւ կամուրջին վրա-
յէն . . . :

Ուաղ , սովորութիւնը անողոք էր , Սահակ
գժբաղդ զոհն եղաւ այդ նորաշէն կամուրջին :

Մայրը՝ անդիտակ այս ահոելի գժբախտու-
թեան , կը սպասէր որ իր որդին գայ , ու չէր ալ
դիտեր թէ ուր գացած է անի : Բայց ի զմւր ,
խարտիշագեղ Սահակ ալ չիերագարձաւ : Ու մայրը
խենդի պէս չոլս կողմ ինկաւ վնասելու իր սի-
րական զաւակը . . . բայց տեղ մըն ալ չգտաւ
զանի :

* *

Ո՞վ գիտէ որքան ժամանակ պալրտեցաւ այս
տարաբախտ մայրը լեռներու և անտառներու մէջ
վնառելով ու ողբալով իր սիրականին կորուառը :
Օրին մէկն ալ, չենք գիտել ի՞նչպէս, թեւեր աշ-
ռաւ և ոլացաւ օդին մէջ :

Ու անկէ ի վեր զիշերտան մժմոթեան մէջ
ինքինքը ծածկած՝ կ'ողբայ իր ուր ճակատագիրը
և տակաւին կը փնտոէ իր սիրական զաւակը ան-
դադար կանչելով տիրագին, Սահակ... Սահակ...
Սահակ... :

(Մասիս)

ՅՈՒՆ. ԳԱԶԱՆՁԵԱՆ

30. ԿԱՏՈՒ ԵՒ ՇՈՒՆ

Երբոր Սղամն ու Եւսան
Դրախտէն վըռընտուեցան,
Շինեցին մի վոքրիկ տուն,
Կանչեցին շուն ու կատուն
Որ պահապան
Դընեն այն տան :
— Ինձի նայէ՛, ըստ շանը, մեր նախահայրն Սղամ,
«Քեւ արտաքին թշնամիները վանելու պաշտօն կուտամ,
«Իսկ դու, կատու, ուշադրութիւն, չըլլայ որ այն չար միներ
«Դան եւ ընեն այս տանը մէջ հազար վընաս խում ու կեր :
«Ու վոկսարէն
«Իմ քսակէն
«Զեղ կերակրել պարտքս ըլլայ
«Եթէ կուզէք՝ կինս ալ վըկայ :

«Թէ գտնուի մենէ մէկը ձեզ գէմ երբեք անիրաւ .
«Թէ անօթի թողան զմեղ՝ թէ պատճառեն պղտի ցաւ ,
«Ծուա մը ինձի բողոքեցէք, զանոնք աղէկ մը պատժեմ
«Զի ես այս տան գործածեցի արդարութիւնն իրեւել վէմ :»

Պէտք է նաեւ սա ալ յիշել,

Ծնած էին Կայէն Սրէլ :

Թէպէտ գեռ փոքրիկ

Բայց «Տե՛ս աղբարիկ»

Հսաւ Կայէն ուրախութեամբ Սրէլին ,

«Մեր ծնողը յուշուկ, բիսիկ հոս բերին ,

«Եկուր խաղանք զուարձանանք անոնց հետ

«Եւ վերջէն ալ քաշենք տըլիոց ծեծ ու փետ .

«Քիչ մ'զբօնունք , եղբա՛յր արի» :

Բայց Սրէլին սիրաը բարի :

Չուզեց ընել այդ կենդանեաց չարութիւն :

«Է՛հ, ես կ'ընեմ», ըստ Կայէն «մ'ըներ գուն» :

Գնաց շանը քիթին բերնին ուժով մէկ հատ մը զարկաւ
եւ կատուին պոչէն սրխմեց որ խեղճը պուաց «միաւ» :

Դեռ շատ տեսակ փորձանքներ

Անոնց գլխոն կը բերէր :

«Աղբար , քեզի ի՞նչ ըրինք

«Որ գու կ'ընես մեզ չարիք .

«Հիմա կ'երթանք , անտղ'ք ,

«Հօրդ կ'ընենք մենք բողոք» :

Ըսին անոնք եւ գնացին .

Գանգատեցան մեծաւորին :

«Վայ անզգամ»

Հսաւ Սղամ .

«Գացէք հեղէ գուք այս անգամ ,

«Ես այն չարին հայսէն կուզամ» :

— «Ողջ ըլլաս Տէր որ մեզ պաշտպան

Կ'ըլլաս» ըսին ու ետ դարձան :

— Մի՛թողուր որ անկիրթ մեծնան,վերջէն ըրածիդ կըզզջաս.
Գուցէ օր մը այս չարիքէն մեղ ալ ելնէ մեծկակ մաս ,
Աւատի պատժէ աս չար կայէնն, ըսաւ Եւա իր էրկան :
— Տէ կնիկ, հոգիդ սիրես դեռ աղայ են, թող խաղան» :

Բայց վախնալով որ չելլայ
Եւայ իրեն վըշտանայ .

Մէկէն կանչեց «Ծօ՛ կայէն ,
Չես խըպիր դուն անօրէն ,
Սոկէ վերջը ասոնց փընսս
Երբէք չընես հա տղաս» :

Կայէնի սիրտն անգութ .
Ս.յո խրատներն ի՞նչ օդուտ .
Հանդարտ որտով շարտունակեց
Ս.յո կենդանեաց քաշել նա ծեծ :

— Մորիթի կտոր
Կամ չոր ոսկոր
Հացի փըշուր
Մեղ կերակուր
Եւ վրայէն այօչափի զրկա՞նք ,
Տէ գլխունսւս ճարը զըտնանք» :

Բսաւ կատուն իր անձկութեան ընկերին ,
«Ահա գտայ ես մէկ միջոց եւ դիրին ,
Կեցիր պատմեմ քեզի ես ,
Տեսնեմ ի՞նչպէս կը գտնես .

Հիմայ երբոր մեղ ծեծել գայ այն կատղած ,
Ես ձեռքը ճանկեմ եւ դուն ոտքը խած ,
Զի ահա տես թէ՝ Ագամ եւ թէ Եւայ
Չեն նկատեր որ մեր հալը ո՞ւր երթայ : »

— Չէ՛, համբերէ՛, բարեկա՛մ ,
Սնոնք ունին մեղ խընամ .

Ականջովդ չի լսեցի՞ր , ապերա՛խտ ,
Որ մեր տէրը տուտ տղուն ի՞նչ խըրատ :

Բայց կայէն դեռ տղայ է ,
Անշուշտ չըներ մեծնայ նէ» ,
Պատասխանեց խելօք չունը կատուկն :

— «Ի՞նչ համբերութիւն
Էյ խենդեցար դուն» :

Հսաւ մեր կատուն .
Եւ դեռ խօսքը բերանն էր
Որ կայէն հոն էր եկեր ,
Մտաւ անսոց մէջերնին ,
Կը կըսմոէր միսերնին ,
Շունը հեղուկ եւ խոնարհ .

«Մ'ընե՛ր» , կըսէր «ալ՛ ախալար» :
«Հազար ըրէ՛ դուն հով , հով
«Քեզ մտիկ ընողը ո՞վ» ,
Հսաւ կատուն ինքնիրեն ,
Եւ կսմիթին փոխարէն

Ճանկ մը զարկաւ կայէնին , ձեռքըն ըրտաւ արիւնլուայ ,
Յետոյ փախաւ ու ելաւ խոչըր ծառի մը վրայ ,
Կայէնն ըսես այս ցաւուն չը դիմանար ու կուլայ .
«Ի՞նչ կարծեցիր , ըսաւ կատուն այն մեծ ծառին վրայէն ,
«Դուն ուզածդ մեղի ընես , մենք չը խօսինք , ո՞վ կայէն ,
«Պատուսյ վըրայ կ'երդնում , ահա ամենքը թո՛ղ վկայեն ,
«Որ երբ ընես դու ինձ չարիք , ես պիտի գամ քու հախեն :

Դարձեալ կուղես
Որ առջի պէս
Երթամ հօրդ բոլոքեմ
Եւ գամ քենէ ծեծ ուտեմ .

Ո՞ւ մնաց ո՞ւ ,
Աւ չեմ ապուշ .

Տայր-թիք
իսայիւն -
ես յըր այք ի՞նչ
ո՞ւնչ չըս ի՞նչ
Տառապան
Մանդա-ութիւն

Պիտի ճանկեմ, գիտցած ըլլաս,
Նայէ՛ որ հետք չինսաս : »
Ս.յո՛ Կայէնին խըրատ եղաւ
Եւ անկէ վերջն ալ բնաւ
Կատուին չէր մօտենար,
Բայց շունին չարիք հազար,
Երբոր կատուն քովէն անցնէր, ան կը պոռար նեմէն թիս,
Բայց այս ոճով դործը գիտցալ կատուն եղաւ շատ հան-
[գիստ :
Մամիկըս կը պատմէր որ
Ա.յն օրէն մինչեւ այսօր
Կատուները ազատ կ'ապրին,
Իսկ չները ստորին :

Տ. Ա. Ճ.

31. Բ. Ա. Ս. Թ. Է. Օ. Ռ.

1885 յուլիս 4ին, առտուան ժամը 8ին (լ. Ե)



Ժօղէֆ Մէստէր անուն ինը
տարեկան աղայ մը, Սդէժ-
մնակող փուապանի մը զա-
ւակ, Սդէժ գիւղէն միս մի-
նակ կ'երթար Մէսէնկոդի
մօտակայ դպրոցը : Մեկուսի
պղտիկ արահետէ մը կ'եր-
թար, դպրոցականի արահետ
մը, երբոր շուն մը վրան
նետուեցաւ և դետին տապալեց զինք : Տղան չփոր-

ձեց մաքառիլ : Դլուխը թեւելուն մէջ ծածկեց :
Շունը զանի խածաւ, դլուտիկեց, մնլեգնելով անոր
վրայ : Որմնագիր մը հեռուէն տեսաւ տեսարանը
և վաղեց : Երկաթէ ձողով մը զինուած, հարուած-
ներ իջեցուց շանը, որ վախաւ տուն գնաց և տի-
րոջը վրայ յարձակեցաւ :

Շան տէրը, թէոտոր Վան, որ Մէսէնկոդի մէջ
նպաստվածառ էր, հրացանը առաւ և շունը սատ-
կեցուց : Կատաղութեան ամէն նշաննելը կը տես-
նուէին . — բերնէն լրացունք, ստամոքսին մէջ յարդ-
և փայտի կարուանք : Պղտիկ Մէսդէրի ծնողքը
կարծեցին նախ թէ պարզապէս գէշ շուն մըն էր :
Օրը անցաւ ինսամելով և լրացով տղուն տասնըշորս
վէրքերը : Բայց, իրիկունը, մայրը սարսափելով
պղտիկ ժողէֆը առաւ և Վիլէ տարաւ, առըթոր
վէպէրին :

Պ. Վէպէր ասիս մէսէիֆով վէլքերը այլեց
քիչ մը և խորհուրդ տուաւ Տիկին Մէսդէրի որ
բարիդ երթայ և տղան տանի մարդու մը, որ,
ինքը միայն, այսպիսի ծանր դէպքի մը մէջ, կրնար
լսւ խրատ մը տալ : «Ա.յդ մարդը իւլմ փողոցը կը
բնակի, աւելցուց բժիշկը, և անունն է Պ. Բաս-
թէու » :

Պ. Թէոտոր Վան ուղեց ընկերանալ այդ մօրը,
որուն մտատանջութիւնը երթալով կ'աւելնար, և
այդ տղուն, որուն սլունքի և ազդելու վէրքերը

այնպէս էին որ երերալով դանդաշելով կը քաշէր : 1885 յուլիս նին երկուշաբթի առաւտ աշխատանոցը հասան :

Պ. Բասթէօռ խորապէս յուղուեցաւ ու այլայլեցաւ այդ խեղճ մարդոց թշուառութենէն : Իր վերջին փորձերովը գտած էր կատաղութեան ժահը, բայց հրապարակ չէր հանած, մարդու վրայ չէր փորձած : Այն ատեն երկու բժիշկներ խորհուրդ տուին Պ. Բասթէօռի որ այդ դրեթէ դատապարտուած տղուն վրայ փորձէ իր մէթոտը, որ շուներուն վրայ միշտ յաջողած էր : Յիրաւի քիչ ատենէն փրկուեցաւ տղան :

Եւ անկէ ի վեր քանիներ կը փրկուին միշտ Պ. Բասթէօռի գիւտին չնորհիւ :

32. ԶՄԵՌՆ

Ո՞վ տըղաք, Զըմեռն եկաւ վերըստին,
Զըմեռն իր ցուրտով, ձիւնովին ահարկու .
Նայեցէ՞ք զըրանն առջեւ հարուստին
Դողլըզայ, նօթի՛, հէզն անվերարկու :

Քամին կը ցնցէ ծառերն անտերեւ,
Վըտակն արդ հեղե՛ղ մ'է յորդափրիուր,
Սեւ ամպեր պատեն երկինքն անարեւ,
Բոյներն անթօչուն են, գատարկ, թափուր :

Դաշտերն ամայի, պարտէզք՝ անմըշակ,
Մերկացած իրենց բոլոր զարդերէն,

Ոչ ծաղիկ ունին, ոչ բոյր անուշակ .
Կարծէք՝ անըզդայ՝ սուսեր, մեսե՛ր են . . .

Տըխուր տեսք մ'ունին ամէն տուն տանիք .
Զըմեռն իր սուզը տարածէ չորս դին .
Աւան, գիւղ, քաղաք, մարդիկ, կենդանիք
Վախն ունին մահուան անել անդունդին . . .

ԱՊԵՔԸ, Գ. ՓԱՇԱՍԽԱՆ

33. ԶՄԵՌՆ

Զմեռը հասաւ . դաշտերը աւրլւեր են . ձայն
ձուն չկայ . ոչ թռչունի ճըւճըւալ, ոչ միջաներ-
րու բզզալ : Վաղուկի չուրը քարի պէս սառ դար-
ձեր է :

Մառերն տերեւը կորուսած ճիւղերնին կ'եր-
կընցընեն՝ վատուժցած թեւերու պէս . գեանին
հիւթը ալ չի քալեր երակներուն մէջ . ոչ ծաղիկ
կ'երեւի, ոչ երկնքին պայծառ երեսը :

Որեւն ալ արտում ու առանց տաքալիսեան
կ'երեւի, ու կարծես թէ միայն բնութեան խեղ-
ճութիւնը ցուցունելու համար կը ծագէ :

Լայ, լաց զաւկըներուդ վրայ, ոլ բնութիւն .
Քիչ մ'ատեն առաջ հանդարա քու գանձերդ կը
վայլէին . վարդը իր անսուշ հոտը կը ձղէր, այդին
իր խաղողը կուտար . ամենն ալ իրենց սննեցածը .
Գեղեցիկ բնութիւն, Աստածոյ վաւակ, ըսէ

ինծի . ինչո՞ւ ասանկ տրառում եռ . միթէ հայրդ
զքեղ երեսէ թողուցե՞ր է . ի՞նչ , միթէ պիտի
կորսութիս երթաս :

Զէ . Աստուծոյ հոգը քեզմէ անպակաս է ,
ու իր ձեռքը քու վրադ է . կուգայ ատեն որ
նորէն կը ծիխն կը ծաղկին ծառերդ , վարդն իր
առջի խունկը կ'առնու , երկիր՝ իր կակուղ խոտը ,
նորէն կուգայ քեզի քու գալունդ :

(Յոյց Աստուծոյ)

Հ . Ա . Ա Լ Ի Շ Ա Ն

34. ԿԱՐՈՒԽԱԿՆ ՈՒ ՄԵԾԱՏՈՒՆԲ

Կարուակ մը կար ատենօք
Որ՝ թէպէտ խեղճ , չըքաւոր՝
Կ'երգէր զըւարթ եւ անհոգ
Աշխատելով ամէն օր :

Դրացի մ'ունէր մեծատուն ,
Որ չըքեղ կեանք կը վարէր ,
Բայց ո'չ հանդիսատ եւ ո'չ քուն
Ունէր ցորեկն ու գիշեր :

Առտըւան դէմ երբ նիրհէր ,
Կարուակն ելած էր արդէն ,
Եւ երգելով միշտ երգեր
Կ'արթընցնէր զայն քունէն :

Հարուստն ըսաւ օր մ'իրեն .
«Կ'ուզեմ բարիք մ'ընել ես .

Հարիւր ոսկի թող բերեն ,
Ա՛ռ , ամենքն ալ կուտամ քեղ :

Կարուակն առաւ երբ ոսկին ,
Ա՛լ աշխարհք իրն էր կարծես .
Բայց այդ գանձով թանկագին
Հոգն ալ մըտաւ տունէն ներս :

Դադրեցաւ ձայնն իր երգին ,
Քունն ալ փախաւ աչքերէն .
Տանջանքն եղաւ իր բաժին
Խաղաղ կեանքին փախարէն :

Օր մ'ալ գընաց հարուստին ,
Որ ա՛լ հանգիստ էր առտուն .
«Ա՛ռ ոսկիներդ , ըսաւ , սին ,
Տուր քունս ու երգս ինծի դուն :»

Հետեւողուրիւն

ԶԱՊԻԼ Կ. ՏՕՆԻԼԵԱՆ

35. ԵՐԿՐԱԳՈՐԾԸ ԵՒ ԵԿԲԱՆԻԿԸ

Երկրագործ մը տեսնելով թէ իր հունձքերը
կը վնասուին ճնճղուկներու լէգէսններէն , որոշեց
այս անիծից ծնունդներուն գործը լմնցնել : Յան-
ցեր լարեց՝ որոնց մէջ անոնցմէ շատերը բռնուե-
ցան : Բոնուած թռչուններուն մէջ կար եկքանիկ
մը : — «Ճնճղէք , կըսէր երկրագործին , տուր ինձ
իմ աղատութիւնս : Ես քեղ յանցանք մը չըրի :

Քնդհակտոռակն ես շատ անդամներ ծառայութիւն
մատուցի քեզ ուտելով այն միջատները՝ որ քու
սերմերդ կը ջնջեն : Եւ յետոյ, մոռցած ես թէ
շատ անդամ՝ իմ հաճելի երգս հրապուրեց քեզ



քու գժուալին աշխատութիւններուդ մէջ » : —
« Այդ ամենը գեղեցիկ և բարի է, պատասխանեց
երկրագործ : Բայց այսօր քեզ չար ընկերներու
հետ կը գտնեմ . գողերու հետ բռնուած ես, պի-
տի մեռնիս անոնց հետ » :

Ով որ չարերու քով կը յաճախէ, կը վար-
ուին անօր հետ ինչպէս չարերու հետ :

36. ԱՄԵՆԱՅՆ ՍՈՒՐԲԻՑ

Հռովիկի մաման մէկ այծիկ ունէր,
Ամէն օր արծելու զայն երբ արձըկէր,
Կ'աղօթէր . «Այծիկը քեզ, ոս'ւրբ Կիրակոս,
կը յանձնեմ եւ նորէն ինձ դարձուր, բե՛ր հոս» :
Այսպէս այսօր նա սուրբ Կիրակոս,
Վաղն սուրբ Մարիոս, միւս օրն սուրբ Թորոս,
Օրուան հետ սուրբ կը փախէր, մինչեւ սուրբերուն
Թիւը հատաւ, ի՞նչ ընէր . — Օր մը լսոս առտուն .
«Այսօր ալ այծըս, ո՞վ սուրբք ամենայն,
Նա ձեզ կը յանձնեմ, գուք եղէք պահպան» :
Հսու, աղօթեց, գիշերն հասաւ,
Սակայն այծիկը, այծը չեկաւ,
Մտմտուքն առաւ, տրուն սկըսաւ,
«Մէկ սուրբի յանձնած այծըս կը գաւնար,
Ամէնուն յանձնած օրս ահա չըգար» :
«Մա՛մա, վերէն ձայն, ձա՛յն հրեշտակի ,
Ամենուն յանձնած օրըդ խորհըրդի
Նստան բոլոր սուրբեր, թէ ո՞վ քո այծին
Պահպան ըլլայ նոյն օր, դեռ կը վիճէին,
Ահա գայլ եկաւ, այծդ անոէր գտաւ
Ու առաւ, տարաւ» :



37. ԱՄԷՆ ՓՈՔՐ ԱՂՋԻԿՆԵՐ ՔՈՅՑ ԵՆ ՄԵԿՄԵԿՈՒ

Տեսէք սա պարտիղին մէջ աղջիկ մը թարմ և սիրուն այն ծաղիկներուն նման, զրոյնք ան կ'ոռոգէ իր անխոնջ ձեռքալ։ Բայց կը ցաւի, որովհետեւ հակառակ իր այնքան ճիգերուն մոլախոտն աւելի կ'աճէր բուրասաանին մէջ։ կը տխրի տեսնելով իր խորդենիները, գամելիաները, յասմիկները ու կ'ըսէ։ «Ո՞հ, շահոքը մներս, և դո՛ւ, վարդ երջանիկ, դուն չէ՞ր որ երէկ զեփիւսին չնչով քու բոյրերդ կը տարածէիր։ դուն շուտով թառամած ես։ կորուսած՝ բոյրդ և արդէն ցօղունիդ վրայ ինկած։ Ո՞հ, նըշափ ճշմարիտ է,

ինչպէս մայրս կ'ըսէր, դուն երիտասարդութեան պատկերն ես, որ քեզ նման սահմանուած է կորսընցնելու իր գոյները և թառամելու։

Կը միսիթարուի սակայն և կը ժպակի տեսնելով թէ կը մնայ տակաւին իր պարտիղին զարդն։ յետոյ նորէն կը տխրի, մտածելով թէ քիչ ատենէն ձմեռը պիտի գայ՝ որուն դէմ անզօր է ինք։

Փոքրիկն Անահիտ նոյն պահուն կը լսէ լալու ձայն մը իր պարտիղին շրջափակին քովս և կը տեսնէ ձայն մը այսակակից աղջիկ մը, տժգոյն և նիհար, իրեն հասակակից աղջիկ մը, աշքերը լալէն կարմրած։ պատառատուն զգեստով, աշքերը լալէն կարմրած։ Անահիտ կը խուզի թշուառութիւնը տեսնելով, ուստի շուտով մը կը հարցնէ այդ խեղճ աղջկան՝ վշտին պատճառը։

«Հէք մայրիկ։ . . .» ահա այն միակ պատասխանը, զոր թշուառուհին կուտայ հառաչելով։ Յետոյ կ'աւելցնէ։ «Մայրս հիւանդ է, շատ հիւանդ։ այսօր սաստիկ տենդէ բռնուած է, հիւանդ։ արդեօք վաղը պիտի ունենամ զանի, Աստուած իմ։»

— Վստահ եղիր, Աստուած՝ որ կը տեսնէ տառապանդդ, քեզի երեսէ չպիտի ձգէ։ Մայրս շատ անդամ ինձ ըսած է թէ կը լսէ ան թշուառներու աղօթքը։»

Օտարուհին բան մը չըսաւ, այլ միայն այն հարուստ աղջկան վրայ արձակեց պաղատագին

նայուածքներ : Թշուառը կ'ուզէլ խօսիլ, բայց չը համարձակեցաւ : Անահիտ գուշակեց զայն . բայց ի՞նչ կրնար ընել :

Մինակ էր ան իր տան մէջ և նոյն իսկ գը-թութեան գործի մը համար պէտք էր իր ծնող-քին կամքն առած ըլլալ :

Պահ մը վարանելէ վերջ իր դէմքը լուսաւո-րուեցաւ անմեղ զուարթութեամբ մը :

« Կեցիր ուրեմն » ըստ , և վաղեց իր պար-տէզն և իր ամենէն սիրած ծաղիկները հաւաքեց և շնորհալի փունջ մը կազմելով դարձաւ :

« Առ այժմ , ըստ , միակ այս ծաղիկները քեզ կրնամ տալ . առ , ծախէ և քիչ մը ստակ պիտի ունենաս » :

— « Աստուած քեզ օրհնէ և իր բարեկներով քեզ լեցընէ » պատասխանեց հէք աղջիկը : Եւ յա-ռաջ եկաւ բարերարուհիին ձեռքն համբուրելու երախտագիտական զդացումներով : — « Ո՞ւ , ըստ Անահիտ , ներկայացնելով իր հրեշտակային դէմքը , այլ զիս համբուրէ . միթէ հալուստ և աղքատ , ամենքս ալ քոյլը չե՞նք » :

38. ԿԱՊԻԿ , ԷՇ ԵՒ ԽԼՈՒՐԴԻ

Իրենց անվերջ գանդասներով ,
Անկուշտ անյագ բաղձանքներով ,
Զանձրացուցին էշն ու կապիկ ,
Ոչ թէ միայն երկնաւոր Դիք ,
Սյլ երկրաւոր եւս կենդանիք :
— « Ա՛յ , ի՞նչ կ'ըլլար , կ'ըսէր էշ ,
« Թէ զյոգ մ'եղջիւր եղին պէս ,
« Ունենայի ճակատիս » :
Իսկ Կապիկն թէ « Վա՛յ կըրիս ,
« Զունիմ յետիս մի փոքրիկ ,
« Պարկեշտաձեւ զըմակիկ » :
Երկրիս խորէն այս լըսելով .
Խըլուրդ՝ տըքաց ցաւած սըրտով .
— « Ապերախտներ՝ , հերիք եղաւ գանգըտուիք ,
Փա՛ռք տըւէք որ դուք երկուքդ ալ աչք ունիք » :
Հ. Գ. Ա. ՔՈՒՅՆԵՐԵԱՆ

39. Ո Զ Խ Ա Բ

Բոլոր ընտանի կենդանեաց տեսակին մէջ ,
ամենէն շահաւոր կեն-
դանին ոչխարն է , որ
մէկ տարուան շրջանին
մէջ զրեթէ իր գնոյն
հաւասար արդիւնք կու-
տայ :

Ոչխարը շատ զար-
մանալի աճուն կեն-
դանի է , որովհետեւ



փոքր և հանդարս բնաւորութիւն ունի . հազար-
ներով կարող ես պահել մէկտեղ : Ոչխարը թէ
փափուկ և թէ դիմացկուն մի կենդանի է . ա-
մառը շոքէն շատ կը նեղուի մանաւանդ երբ իր
արօտատեղ դաշտավայր ըլլայ , իսկ հովասուն լեռ-
ներ և լեռնադաշտեր՝ ոչխարի համար արքայու-
թիւն է : Բայց ձմւան ցուլստերուն դէմ կը մրցի :
Տէր Աստուած հոգալսով՝ այդ խեղճ կենդանին
թանձր բուրդով անոր քամակ պատսպարեր է .
միթէ այդ օրհնեալ կենդանւոյն բուրդով մեր
թիկունք չի[®] տաքնար :

Գարնան , ապրիլ ամսոյ կիսուն , կ'սկսին ոչ-
խարներ հետզհետէ ծնիլ , երբ դուրս ելած կ'ա-
րածին նորաբուսիկ և հին խոտերով : Նոր ծնած
դառներ և ովկիններ հովիւ իր իշուկին բառնալով
երիկուան գիւղ կը բերէ : Մայիս ամսոյ մէջ երբ
արօաններ կը զօրանան , կը սկսին ոչխարներ կթել :
Եւ երբ կիթն կը լմննայ , գառնարածն՝ որ գառ-
նուկներ և ուլեր առանձին տեղ պահած է , թող
կուտայ : Դու տես ան ժամանակ մի զուարճալի
տեսարան , ոչխարներ կը բառաշեն , գառներ կը
մայեն , կը թուի թէ մայր ոչխար իր գառնուկին
հետ կը խօսի և գառնուկ մօրը հետ . հարիւրաւոր
ոչխարներ գառներ կը խառնուին իրարու հետ ,
մինչեւ գտնեն գառներն իրենց բուն մայրեր . բուն
մայրը երբեք օտար գառն չընդունիր իր տակը :

40. ՆՈՐ ՏԱՐԻՆ

Ինչպէս թոշուն անտառին
կուգամ երգել նոր տարին .
Աղուոր , բարի մէկն է ան ,
Սիրեմ սիրով անսահման :

Անուշ ձայնով կանչէ զիս .
Կըսէ . « Խնդա՛ դուն , հոգի՛ս .
« Բերեմ ձմրան մէջ գարուն ,
« Քեզ պարգեւներ տամ սիրուն » :

Ընտանեկան մեր սեղան ,
Ուր բարիքներ կը տեղան ,
Թող զարդարուն ըլլայ միշտ ,
Չունենանք բնաւ արցունք , միշտ :

Ուրախութիւն մի անվերջ
Փայի թող մեր կեանքին մէջ .
Մեր շթներուն վրայ ժպիտ
Շողայ իրեւ մարդարիտ :

Թող նոր տարւոյն ձեռքն առատ
Մեզ նըւիրէ բարիք շատ .
Պըսակէ մեր ամէն յոյս .
Այս՝ ջերմ մաղթանքն է հոգւոյս :

41. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Յովհաննէս Կոստանդին Այվազովսկի ծնած է Խրիմի Թէսդոսիա քաղաքը 1817 Յուլիսի 17ին։ Իր ծնողներն աղքատ էին և երբ բախար չժպտէր իրեն և բարերար ձեռք մը չհանէր դիմոն և շտանէր այնպիսի միջավայր մը՝ ուր իր բնածին տաղանդը զարդացնելու ամեն միջոց բայց էր իր առջեւ, աշխարհ մեծ նկարչէ մը պիտի դրկուէր։ 1833ին, Այվազովսկի, գեռ 16 տարեկան եղած ժամանակ, շնորհիւ իր աղդեցիկ պաշտպանին՝ Պետերովդի Գեղարվուեստից Ակադեմիան ընդունուեցաւ իրեւ գիշերօթիկ սան, և իր ուսման առաջին տարիներէն ցոյց տուաւ թէ ի՞նչ մեծ ապագայ կը խոստանար ինք՝ նկարչութեան ասպարէղի մէջ։ Իր ծովանկարի տաղանդն առաջին անգամ երեւան ելաւ 1835ին նկարած՝ «Օդը ծովու երեսին» պատկերով, որու համար առաջին արծաթէ մետարով վարձատրուեցաւ։ Իրեւ ծովեզերքի զաւակ՝ իր մոքի և հոգւոյ մինչեւ խորերը թափանցած էր ծովային հորիզոնն, որ այնուհետեւ իրեն համար նկարչական բանաստեղծութեան անվերջանալի աղքիւր պիտի դառնար։

Այվազովսկիի պատկերները ամեն տեղ ընդհանուր հոչակ կը վայելեն։ Ոչ մէկ նկարիւ կինայ այնպէս բնական ձեւով լաթի վրայ հանել ծովի

ջուրն, օդը, լոյսը, ևայն, որչափ Այվազովսկի։ Հանդարա, զուարթացնող բանաստեղծութիւն մը կը շնչէ իր նկարներէն։ Բաղադրութեան գեղեցկութիւնն և ներկերու ներդաշնակութիւնը կը շոյեն, կը հմային նայողի աչքը։ «Այվազովսկի նախ և յառաջ վրձինի բանաստեղծ է, ստեղծող է։ Ինչ բանի որ գալի Այվազովսկիի վրձինը, իսկոյն անոր վրայ կը սկսի փայլել աստուածային լոյս, որուն ամփոփման կէսն իր հոգւոյն մէջն է, ուսկից ներշնչման այն կենդանի աղքիւրը կը փոխանցի լաթին։ Կարելի է համարձակ ըսել՝ թէ ամբողջ Եւրոպայի մէջ չկայ Այվազովսկիի հաւասար ծովանկար մը»։

(Հանդէս Ամսութեայ)

Ա. ՏԻՒՐԵԱՆ

42. ԴԺԳՈՀ ՓԻԼԻԿ

Արմանք զարմանք տիրեց Փիլիկին, Տրտունջ տրտունջ հանեց ի յերկին, Թէ կարգ ու կանոն մէջ արարածոց Շատ ծուռ ու մուռ են խառնակ ու շրփոթ։ «Սա նայեցէք վեր ծառին խոշոր, Ուր կան փոքրիկ ընկոյզներ կըս-կըսր, Խսկ բարակուկ, ցածուկ վրայ ոստին կան ձմեռուկներ մեծկակ ահագին։ Ես Աստուծոյ տեղ լինէի, Հակառակը կը գործէի».

ինչ եւ իցէ , եղածն եղած է .
Քէփիս նայիմ , քունըս եկած է .
Հանգչիմ քիչ մը , առնում ես զով .
Խաղաղ քաշեմ քուն անվրդով » :
Փիլիկ աղօր իհիփիկ տեղն էր ,
Ի՞նչն էր պակաս , փորն իսկ կուշտ էր .
Սակայն այս իր իհիփիկ լսւ
Քըթէն բերնէն շուտ եկաւ ,
Յանկարծ մէկ ընկոյզ րա՛ վերէն փրթա՛ւ ,
Փիլիկին ճակտին շրա՞խ մը զարկաւ .
Յատկեց նա տեղէն , եւ հա իր ճակատ
Գտաւ քսկըռտուած եւ արեամը ներկուած .
Ճեկեկաց իսկոյն եւ բազկատարած
«Ուզիլ են , գոչեց , գործք քո , Տէ՛ր Աստուած .
Զի ձմերուկներն եթէ լինէին
Իմ ուղածիս պէս կատարը ծառին ,
Այժմ գլուխս ու ուղեղս ջախջախուած էին .
Աստուած իմ , փառք քեզ , փառք միշտ ի յերկին » :

Վ.Ա.Հ.Ա.Ն. Մ. Վ. ՏԵՐ ՄԻՒ.Ա.ՍԵ.Ա.Ն.

43. ՊԱՏՈՒԱԿԱՆ ՏՈՒՆԿԸ

Երկու աղախիններ , Մարիամ և Մարդարիտ ,
Խւրաքանչւրը շատ ծանր ծրար մը կը տանէին .
սա կը տրտնջար շարունակ և կը գանդատէր իր
բեռան ծանրութեան համար . նա կը խնդար անոր
վրայ և կը ծաղրէր , իբր թէ թեթեւ էր ան : —

« Խ՞նչպէս կրնաս խնդալ , ըստ Մարդարիտ , քու
ծրարդ ալ ծանր է իմինիս պէս և դուն ինձմէ
աւելի զօրաւոր չես » : — « Որովհետեւ ես իմինիս
մէջ դրի , պատասխանեց Մարիամ , պղտիկ տունկ
մը , որ անոր ծանրութիւնը կը նուազեցնէ » : —
« Կ'աղաչեմ , ըսէ ինձ , Մարիամ , ի՞նչ է այն տուն-
կը . կ'ուզէի զայն ունենալ , իմ կողովս ալ թե-
թեւցնելու համար » : Մարիամ ըստ անոր . « Այն
պատուական տունկը՝ որ ամէն բեռերը կը թե-
թեւցնէ , համբերութիւնն է » :

ԵՄԻՑ

44. Զ Ի Ի Ն Ը

Յորձանքներով խօլական ,
Պըտոյտներով խենդ ու մենդ
Ճերմակ ձիւներն վար կուգան .
Կարծես ունին յոյզ ու տենդ :

Եւ բամբակի պէս կակուզ .]
Բայց պա՛զ , շատ պատ կը դիզուին
Իբրեւ անհուն կարագ իւզ
Տանեաց վըրայ մեր գիւղին :

Ճերմակ , ճերմակ , ճեպ' ճերմակ
Երկինք , դաշտեր , մարգ ու լեռ ,
Փողոց , տուներ , հողն համակ ,
Նոյն իսկ ճերմակ են մարդեր :

Բայց , ո՞հ , ո՞ւրկէ անդադրում
Կը տեղայ ձիւնն ըսպիտակ
Սառ ձըմեռուան մէջ տըրտում
Երկնի լայն , լայն ծովին տակ :

* * *

— Վե՛րը , շա՛տ վերն , հո՞ն , հեռո՞ւն ,
Խորութեանց մէջ անհունին ,
Ետեւն ահեղ ամպերուն
Զուարթունք դըրախտ մը ունին :

Պարասլացիկ հրեշտակաց
Թափած փետուրն երկընքէն
Ճերմակ , թեթեւ , հողմասլաց՝
Սառնորակ ձիւնն է . — կ'ըսեն . . . :

(Մասիս)

ԿԱՐՈ

45. ԱՐԲԵՅՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Սարգիս արբեցող և ծոյլ եղած էր . ըմպեւ-
լիքի համար ունեցած ճաշակին համար կորսնցուց
աշխատելու սովորութիւնը : Սնդադար գինետուն
երթալով մոռցաւ իր շուկայի ճամբան և իր ըն-
տանիքը թշուառութեան մէջ թողուց : Օր մը սո-
վորականէն աւելի գինով իր տունը երթալով , իր
կնոջմէն ստակ խնդրեց երթալ խմելու համար :
Ի՞նչպէս խեղճ կինը պիտի կրնար տալ : Նա նոյն
իսկ հայ գնելու համար ստակ չունէր :

յանկարծ խենդենալով դանակ մը առաւ և զանի-
զարկաւ :

Դատարանը զանի տամնեհինդ տարուան տա-
ժանակիր աշխատութեան դատապարտեց :

Անժուժկալութիւնը . յիմարութեան և ոճի
կ'առաջնորդէ :

Նշան աղնիւ մարդ մ'էր , վաճառատան մը մէջ
արկղակալ էր , լաւ գնահատուած էր իր տէրերէն .
յարդուած էր իր շրջանակին մէջ :

Օր մը չար խորհուրդներու մտիկ ընելով՝
ինքինքը խաղալու տուաւ . իր ամսականին կէսը
կորսնցուց : Փոխանակ այդ տեղ կենալու ուզեց
իր կորուսած գումարը շահիլ և դարձեալ կոր-
սնցուց : Իր բոլոր ինայածները կ'ոչչանային . այն
ատեն հատցուց արկղին մէջի դրամը՝ որ իրենը չէր
և շարունակ կորսնցուց :

Թշուառը , տեսնելով թէ կուգայ այն վայր-
կեանը երր իր տէրերը պիտի ճշդրէն արկղը ,
չկրցաւ յանձն առնուլ իր անպատութեանը մէջ
մնալ : Անհետացաւ , իր ընտանիքը և զտւակները
թշուառութեան մէջ թողլով :

Խաղամութիւնը վատութիւն մ'է :

46. Ա. Ս Ո Ւ Ա. Ծ

Լոյս տառերով քու անուն
Սըրտերու մէջն է գըրուած .
Այս տիեզերքը անհուն
Պատմէ բարիքդ , ո՞վ Աստուած :

Ի՞նչ անուշիկ հայր մ'ես դուն ,
Տաս մեզ չնորհներ լիուլի .
Քեզմով այս չքեղ հընութիւն
Գեղեցկութեամբ կը փայլի :

Քու գործերուդ աննըման
Է մարդկութիւնն օրհնաբան .
Կ'երզէ քու փառքդ անսահման
Թէ՛ բանաւոր թէ անբան :

Երկինք աստղեր ունի զարդ ,
Երկիր՝ ծաղկունք գոյնըզգոյն .
Իմաստութեանդ ալ լոյս զուարթ
Օ՞ն , զարդ ըրէ՛ խմ հոգւոյն :

Աստղի մը ծոցն ես հանգչած՝
Ա՛հ , գէթ մի օր տեսնէի
Քու պայծառ գէմքդ , ո՞վ Աստուած ,
Այդ օրուան բի՛ւր երանի :

47. ՀՈՐԻՄԱՅԻՆ ԱԽԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Երբ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ խոր վիրապէն
Ելաւ եկաւ Վաղարշապատ , վաթսուն օրը ամբողջ
Քարոզ խօսեցաւ հեթանոս հայ ժողովուրդին .
Բիւրաւոր մարդիկ մտիկ կ'ընէին . Անշուշտ անոնց
մէջ շատ աղքատներ կային . Լուսաւորիչն ուզեց
աղքատներուն համար մի ճաշ պատրաստել . բայց
այս ճաշը Յիսուսի պէս հրաշքով չպատրաստեց ,
Հրաման ըրաւ հազարաւոր գեղացիներուն՝ որ եղ
ու ոչխալ բերեն . զանոնք մորթել տուաւ , մեծ
մեծ կաթսաներ կրակի վրայ դրին , միսեր մէջ
Եցուցին , կորկոտն եւս վրան . հրաման ըրաւ հասր
տաբազուկ կտրիճ երիտասարդներուն և ըսաւ
հարէֆ զամ , որով այս կերակուրի անուն մնաց
հարիսաւ :

48. Ն Ո Ր Ա. Ծ Ի Ն

Մայիսի ընծայ՝
Աղւոր լուսընկայ ,
Ո՞ր աստղի ծոցէն
Եկար խեր ու շէն :

Մայիսի հոգեակ՝
Սիրուն աղաւնեակ ,
Ո՞ր թաշնոյ բունէն
Ծնար խեր ու շէն :

Մայիսի նուէր՝
Վարդերու ընկեր,
Ո՞ր ծաղկի հոտէն
Ծրթունք քո բարեն :



Մայիսի ճօնած
Քնքուշ արարած,
Ո՞ր վարդի ցոլէն
Աչկունք քո բղիսեն :

Մայիսի ընձիւղ՝
Ծաղկալից զամբիւղ
Ո՞ր խնկի ծառէն
Բուսար խեր ու շեն :

Մայիսի ժպիտ՝
Փայլուն մարգարիտ,
Ո՞ր անոյշ հովէն
Բերես խեր ու շեն :

Մայիսի պարգեւ
Զուարթուն թեթեւ,
Աստոծոյ քովէն
Բերիր խեր ու շեն :
(Լոյս և Սոուերֆ)

Մ. ԱՃԵՄԵԱՆ

49. ՆԵԽՏՈՒՆԻ ՇՈՒԽՆԲ

Նեւտոն շատ կրակուբոց և աշխոյժ շնիկ մը
ունէր՝ որ իր վաղքերով
և ոստոստումներով իր
տիրոջ ուրախութիւն կը
պատճառէր։ Տիաման կը
կոչուէր։

Իրիկոն մը, Տիա-
ման ցատքեց անուանի
գիտոնին գրասեղանին վրայ և աշտանակը տա-
պալեց հոն գտնուած թուղթերուն վրայ։

Բոլորովին ոչնչացան շատ մը ձեռագիր թուղ-

թեր՝ որոնց համար այնքան գիշերներ աքնած էր։

Ուրիշներ պիտի զայրանային, պիտի հարուա-
ծէին անգիտակից կենդանին։ Նեւտոն, տեսնե-
լով անդարմանելի շարիքը, գոհ եղաւ ըսելով։

— Տիաման, Տիաման, որշափ չես գիտեր ը-
րածդ։

Ցաւերը անդարման իսկ ըլլան, համբերու-
թեամբ կը թեթեւնան։



50. ԱՂԱՀՆԻ ԵՒ ԿՍՉԱՂԱԿ

Կարկաչող կաշաղակն
 Ու հսմեսոտ Աղաւնեակն՝
 Օր մի ելան ի միասին
 Սիրամարգին հիւր գացին :
 Լաւ ընդունեց Սիրամարգ
 Հիւրերը՝ շատ մեծարեց,
 Եւ դառնալնուն ժամանակ
 Նորէն գալերը խընդրեց :
 Ճամբան՝ զմայլած Աղաւնին
 Սիրամարգին վարմունքին,
 «Ի՞նչ քաղցրը, սիրուն
 «Հիւրենկալութիւն»
 Բառ, «Ադոր, կարծեմ, հոգին
 «Շատ նըման է դըրսի տեսքին» :
 «Բայց դիտեցի՞ր դուն»,
 Հարցուց կաչաղակ,
 «Անոր ստքերուն
 «Խորթ արգեղութիւն».
 «Այն ի՞նչ սեւ, բարակ . . .
 «Ի՞նչ անախորժ ձայն,
 «Ականջքըս խըլացան»,
 «Զէ՛, կըրկնեց Աղաւնին .
 «Զի տեսայ ես այն տեղ
 «Ոչ մի բան խորթ արգել .
 «Անոր սիրան է բարի
 «Վայելուչ կերպարանք .
 «Կեցցէ՛ Սիրամարգ» :

Զարանենդ խզուն
 Գըտնել կ'աշխատի
 —Նոյն իսկ բարոյն մէջ, —
 Եթէ ոչ չարութիւն
 Գէթ վատ կողմն կամ էջ :
 Այլ առաքինին
 Եւ հոգւովու արդար
 Ծածկէ կամակար
 Ինչպէս Աղաւնեակ,
 Այսց վըրիպակ :

(Քազմավեպ)

Հ. ԳԵՐՈՎԱՅ. Վ. ԳՈՒՇԵՐԵՎԱՆ

51. ԽԵՂՃ ՄԵՇ ՀԱՅՐ

«Խեղճ սիրելի մեծ հայր . անշուշտ խուլ ե-
 ղած է . բայց ես անոր բարձր կը խօսիմ և անիկա
 կը լսէ երբ անոր ըսեմ թէ զինքը սրտանց կը
 սիրեմ»:

«Ոն գլութէ կոյր է . անոր թեւերէն կը բըռ-
 նեմ և ես զանի կը տանիմ այն ամէն տեղ ուր
 երթալու փափաք մը կը յայտնէ : Ամէն օր լագիր
 կը կարդամ անոր և ես իրմէ աւելի երջանիկ եմ
 տեսնելով թէ իրեն հաճոյք կը պատճառեմ»:

«Ոն ինծի պատճութիւններ կը պատմէ . ա-
 նոնք միշտ միեւնոյն են . վասն զի ալ յիշողութիւն
 չունի մեծ հայր : Ես անոնց մտիկ կ'ընեմ ու-
 շադրութեամբ, իբր թէ անոնք նոր ըլլան :

« Լաւ կ'զգամ թէ երկար ատեն չունիմ զանիր
տեսնելու, սիրելի խեղճ մեծ հայր», և երբ ալ
չըլլայ, գէթ գոհունակութիւն պիտի ունենամ որ
եր վերջին օրերը քաղցրացուցած եմ» :

Այսպէս կը խօսի և կը գործէ պղտիկ Պետ-
ռոսը, աղնիւ տղայ մը՝ որ թուներուն ամենէն
աղէկն է :

52. ԻՐԵՐՈՒ ՏԵՐՈՒԹԻՒՆԸ

Տըխուր էր քարը յիշելով կաղնին,
Որ աղատ կ'աճի հանդէպ արեւին,
Կը դիտէ դաշտը ժայռէն բարձրադիր,
Սարսուով լունդուն երբ օդն է կարմիր :

Տըխուր էր կաղնին յիշելով երէն,
Որ կը վազվըստէ ծառերուն շուքէն .
Բարձրադլով կայտող թեթեւ եղջերուն
Նետելով երկինք հընջիւնն երգերուն :

Տըխուր էր երէն արծիւն յիշելով,
Որ կը սլանայ փիլ օդին մէջ զով .
Բիրերը լեցուն լոյսովն իր ծրծած :
Տըխուր էր մարդն ալ յիշելով Աստուած :

53. Հ Ե Ք Ե Ա Թ

Սա ժայռերը որոնց վրայէն բազէները կը
ճախրեն և օձերը կը սողան սովելով, ուր մա-
մուռներ փաթթուելով անոնց կողերուն վրայ գորշ
կանանչով մը կը գունաւորեն, ատենօք, աւան-
դութիւն մը կ'ըսէ, այդ հսկայ ժայռերը մարդիկ
էին մեզի պէս : Անյիշատակ ժամանակի մը մէջ
այդ խոպան տեղէն հպարտ ամբոխ մը կ'անցնէր,
հեռու երկիրներէ եկող հարսնեւորներու խուժան
մը . ու թմբուկին, դափին ձայնը, երգողներու,
ծնծղաներու հնչիւնը, զգեստներուն շողիւնները
հեռուն, դաշտերուն մէջ կ'երկնային, ու հարսը,
քօղին մէջ ծած կուած՝ իր գեղեցկութիւնը կը
պահէր : Յանկարծ անզուսպ փափաք մը կ'ուռեցնէ
հարսին սիրալ՝ որ գէմքը բանայ ու վայրի սիրով
մը իր գեղեցկութիւնը անծանօթ տեղերուն ցոյց
տայ . կը նետէ քօղը ու իր աննման գէմքը արե-
ւին կը ցուցնէ : Այն ատեն, անոր գեղէն ու հը-
պարտութենէն զայրացած, բնութիւնը անէծքով
կը շանթահարէ բոլորը հնա, այդ տեղը, և ան-
դութիւն սլակերպութեամբ, մարդիկը քար կը
դառնան՝ անշարժ ու համր :

Անցորդներու նայուածքները վեր կը դառնան
մերթ ահաբեկ՝ հսկայ բարձրութենէն, և վրդով-
ուած յուղումով կը հարցնեն անոնք ինքնին թէ

իրան այս քարերը մարդ եղած են ատենով,
կեանքը իրան անոնց մէջէն ալ անցած է . սա
քարերը՝ որոնց վրայ անհամար թռչուններու հա-
զարաւոր փետուրներ ցլուած են :

ՈՌԻԹԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

54. Ն Ա Պ Ա Ս Ա Կ

Յից ականջներդ ուղղած ի վեր ,
Վար կախած զոյգ կարճուկ թեւեր ,
Մացառին մէջ , շուքին տակ ,
Հսէ՛ , այդ քու վառ սեւ աչեր
ինչե՞ր կ'ուզեն տեսնել , ինչե՞ր . . .
Փոքրիկ , կայտա՛ռ նապաստակ :

Թեթեւ , փափկիկ , ճարպիկ , արթուն ,
Այլ կարճամիտ էակ մես դուն ,
Կը սիրես խաղ ու կատակ ,
Եւ՝ անառակ մանկանց նըմտն՝
Անդադար աստ եւ անդ գաս ման ,
Անհոգ , անդործ , անվաստակ :

Սակայն ի զուր շուքին մէջէն
— երբ որսորդաց շուներ հաջեն —
Սչերդ ուղղես զերդ դիտակ ,
Եւ պահ մ'յետոյ ալ չորս ոտքով
Կ'աճապարես փախչիլ փութով . . .
Քեզ կը հասնի՛ մի գնդակ . . . :

Եւ ահա թարմ կանանչ լսութին
Վըրայ վըշես դու շոնչդ յետին ,
Սիրուն այլ լսե՛ղմ նապաստակ ,
Եւ որտորդներն՝ իբրեւ դագաղ
Քեզ կը բերեն . . . կաշեայ մախաղ ,
Քեզմով շահին ապա ստակ . . . :

(Ծողեր ու Ֆողեր)

ԱՆԵՔՍ Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

55. ԴԷՌԻԳ. ՍԹԷՖԻՆՍԼԻՆ

Գէորգ Սթէֆէնսլին , Անդղիացի մեծ գետ-
նաշափը իր տղայ հասակէն
ցոյց տուաւ մեքենադիտու-
թեան համար մեծ յօժարու-
թիւն մը . բայց իր հայրը ,
հանքագործ մը , շատ աղքատ
էր անոր կըրժութիւն տալու
համար : Սթէֆէնսլին ինքնիրեն
սորվեցաւ :



Օգտակար կերպով գործ ածելով մեքենագի-
տութեան մասին իր նշանաւոր յօժարութիւնները՝
երկաթուղիներու մեծ հնարագիտութեան ճշմա-
րիտ հիմնադիրն եղաւ : Բազմաթիւ գծեր շինեց-
ըիտ հիմնադիրն եղաւ : Բազմաթիւ գծեր շինեց-
ըիտ հիմնադիրն եղաւ : Պելճիգայի , Խոտալիոյ , Սպա-
նիոյ , Եղիպտոսի մէջ :

Նատ հարուստ եղաւ։ Ոյս մեծ բախտը կը
պարտէր իրեն խելքին, աշխատութեան և ամե-
նէն վեր, իր յարատեւութեան։ « Ոռանց յարա-
տեւութեան, կ'ըսէր ան երիտասարդներու՝ որոնց
կ'ամսորժէր խրատներ տալ, երբեք չպիտի յաջողէի
բանի մը մէջ։ Յարատեւութիւն ի գործ գրի ինք-
նիրենս սորմլլու համար, դժուարութիւններ բառ-
նալու և ցրելու նախանձութիւններ՝ որոնց հան-
գիպեցայ ճամբուս վրայ»։

56. ՃՆՃՂՈՒԿՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿՐ

Ա. Ռ. Ա. Կ Ի Կ

(სამანიულო)

Աղուաւ մ'իկր հատու ձիրաններուն տակ
Բոնած էր ուժգին մի խեղճ նապաստակ .
Տեսաւ զայն ձնձղուկն եւ դոչեց «Բնկե՛ր ,
Սրընթաց ոտքերդ ո՞ւր էիր ձրգեր . . . : »
Բագէ մ'որ կ'անցնէր՝ լըսեց այս խօսքեր ,
Սըլացաւ եկաւ եւ ձնձղուկն որսաց :
Նապաստակն յայնժամ իւր սրտին խորէն
Հրճուեցաւ եւ փոյթ հարցուց հեգնօրէն .
—«Ո՞ւր ձրգեր էիր թեւերդ սրորնթառ . . . »

(*Tn̄klr n̄ 3oŋklr*)

ԱՐԵՔՍ Գ. ՓԵԼՈՈՒՆԻ


57. ԽՂՁԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Յիշանքլին իր երիտասարդութեան ատեն բա-
ւական գէշ ունակութիւններ ունենալու հակամէտ
էր : Սակայն իր վրայ հսկե-
լուն և իշխելուն չնորհիւ մար-
դոց ամենէն առաքինին և ի-
մաստունը եղաւ : Գիտէր թէ
ի՞նչպէս կարեւոր է ամէն օր
գործերու մասին խղճի քննու-
թիւն ընել : « Ի՞նչ կ'ընէ վա-
ճառականը՝ որ կ'ուզէ հարըս-
տանալ » կ'ըսէր : Ճիշդ հաշիւ կը բռնէ իր ելք ու
մուտքին : Ի՞նչ պէտք է ընէ մարդ մը որ կ'ուզէ
աւելի կատարեալ ըլլալ : Պէտք է որ ամէն առ-
տու և ամէն իրիկուն ուսումնասիրէ իր հոգեկան
վիճակը, ինքնիրեն հարցընէ թէ . ի՞նչ բանի մէջ
լաւագոյն եղած է :

իր խղճի այս օրական քննութեան մէջ աւելի
յաջողելու համար, Թրանքլին մտածեց պղտիկ
տեսլրակ մը ունենալ, ուր ամէն օր սեւ գծով մը
կը նշանակէր իր մէն մի գործած յանցանքը, այն
բարոյական սկզբունքին դիմաց՝ որուն մասին թե-
րացած էր:

Յաղողեցաւ իր թերութիւններէն ա-
զատիլ։ Իր թերութիւնները ուղղելու լաւագոյն
միջոցն է անոնց հետ մի առ մի կռուիլ։





58. ՄԱՄՈՒԿՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Ա. Ռ. Ա. Կ Ի Կ

(Նմանողաբար)

Վարպետ ոստայնանկ մամուկներէն մին,
Մի օր, ծաղրելով՝ ըստաւ չերամին .
«Ո՞վ խեղճ կենդանի,
Զե՞ս տեսներ քանի
Կարձ միջոցի մէջ կը յաջողիմ ես
Ծածկել իմ ցանցով՝ ամբողջ պատուկէս .
Մինչես դու՝ գանդաղ,
Լըռին ու խաղաղ՝
Այնքան քիչ գործող ես եւ յամրընթաց : »
Պատասխան՝ չերամն ոսպէս տալ փութաց .
«Մամուկդ ինքնագով,
Որ քու հիւսուածքով
կը պարծիս, այդ գործդ՝ անարժան, անպէտ՝
ի՞նչ կ'արժէ, ոչի՞նչ, այսօր եւ յաւէտ .
Մինչ ես օգտակար
Մի բանի համար
Կ'աշխատիմ որ է՝ թէպէտ եւ սակաւ՝
Այլ լս'ւ : »

Ա.Ն.Ք. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

59. ՊԱՊԻԿՆ ՈՒ ՀԱՆԻՆ

Կէս դարէ ի վեր կը բնակին անոնք այս տունն
և նոյն սենեակներն : Հոս ամուսնացան . կարասի-
ներ նոյն են յիսուն տարիներէ ի վեր, մաքուր և
աչքի հաճելի՝ որ կարծես թէ տարուան մ'են :
Յիսուն տարիներ անցած են գեղեցիկ օրուան մը
պէս. ապրեցան, սիրեցին և ծերացան : Հոս մեծ-
ցան մանուկները . հոս վայելեցին միշտ օրհնութիւն
և սէր :

Կ'ուզէք որ ճանչցնեմ ձեղ պապիկն :
Ուզզամութեան, աշխատութեան, բարե-
գործութեան նուիրուած կեանք մ'է ան : Ան իր
բախտն ինք շինած է . ի՞նչ հոգածութիւններ ը-
րած է իրեններուն համար : Տեսէք, իր հասակն
ուղղածիդ է տակաւին և իր գնացքը չդեղեւիր .
իր գանգը բարձր և ճաղատ, բայց տակէն ճեր-
մակ խոպոպիքներ իր պատկառելի գլխուն բոլոր-
ակիքը պսակ մը կը յօրինեն : Աւաղ, մի քանի տա-
րիներէ ի վեր նայուածքը տկարացած է :

Իսկ հանին անուշիկ պառաւ մ'է . իրօք գե-
ղեցկութիւնը և կորովը կողուսած է, բայց գեռ-
սիրտը կը բաբախէ : Ա՞ն, ինչեր կը սորվի մարդ-
անկէ, ի՞նչ գեղեցիկ դասեր կ'աւանդէ իրեններուն :
Անոր հոգին տաճար մ'է սրբութեան, դա-
սարան փորձառութեան . արթուն կը հսկէ իրեն-

Ներուն վրայ . ինքն է քաջալեր , սփոփանք , լոյս ,
գուրգուրանք իր սիրելիներուն վրայ . իր սիրոյ
կրակով կը տաքցնէ զանոնք :

Բայց , վահ , որչափ տխուր է հիմայ . կը յիշէ
ամէն վայրկեան իր թոռնիկն , որ մահառիթ հիւ-
անդութեան մը զոհ եղաւ . թշուառ կինն այս
կորուստին համար շատ անդամ կ'առանձնանայ
իր խցիկը և կ'աղօթէ ու կ'արտասուէ . կը պա-
զատի սրտանց որ պահ մը բացուի երկինք և
տեսնէ իր թոռնիկը :

Միհիթարուէ , վշտահար կին , մօտ է ժամն և
գուն պիտի երթաս գտնել բարձր սարին վրայ
բոյն մը՝ ուր կը հանգչի անմեղ ձագուկդ :

60. ՈՐԹԱՏՈՒՆԿՆ ՈՒ ԿՆՉՆԻՆ

Ա. Ռ. Ա. Կ Ի Կ

(Նմանօղաբար)

Որթատունկ մ'աննեցուկ , անզօր ,
կը վատթարանար օրէ օր .
Զէր տար ոչ տերեւ , ոչ խալող .
Կնձնի մ'անոր պաշտպան եղաւ .
«Թէ ես պըտուղ չունիմ բընաւ՝
կ'ըսէր , գէթ լաւ պըտուղ տըւող
Մի տունկ կ'ապրի իմ պատճառաւ : »

ԱՊԵՔՍ. Գ. ՓԱՆՈՍԽԱՆ

61. ՊԱՐՏՔԸ ՆՈՒԻՐԱԿԱՆ ԲԱՆ Մ'Է

Կարապետ բարի գործաւոր մ'է որ կանոնա-
ւորապէս իր թոշակը տուն կը բերէ . անոր ըն-
տանիքն երջանիկ է և բանի մը պակասութիւն
չունի :

Օր մը հիւանդացաւ և ամբողջ ամիս մը չաշ-
խատեցաւ : Իր բոլոր խնայողութիւնները հատան
քժշկի և գեղագործի ծախքերուն համար : Կարա-
պետ առողջացաւ , բայց կինը և աղաքը հաց չպիտի
գտնէին ուտելու :

Կարապետ իր բարեկամներէն մէկուն դիմեց
որ աղնուութիւն ունեցաւ անոր կանխավճար մը
ընելու :

— Քեզ պիտի վճարեմ այս՝ ամիսը 100 դրչ-
տալով , կ'ըսէ անոր կարապետ , և չնորհակալ եմ
քեզ քու ընծայած բարեկամութեանդ ապացոյցին
համար :

— Աղէկ , աղէկ , կ'ըսէ բարեկամը , կոխւ չենք
ըներ :

Կարապետ մեծ հոգ մը ունեցաւ , ոյն է իր
խոստումները կատարել : Ամէն շաբաթ իր շահա-
ծէն մաս մը մէկ կողմ կը դնէր : Աւելի լաւ պիտի
սեպէր անօթի մնալ քան թէ խոստումը չկատարել :

Պարկեշտ մարդ մը խղճի մոօք իր խոստում-
ները կը պահէ :

62. ՄԱՅՐԻԿԻՆ ԵՐԳԸ

Սիրեմ ցողին շիթեր բարդ
եւ զեփիւովիկն առտըւան,
Սիրեմ վարդէ ամպին վրան
Տեսնել ծագել օր զըւարթ,
Բայց զոր սիրեմ կաթոգին,
Երջանկութեամբ, հաւատով,
Սուրբ եւ քաղցրիկ գորովով
Դու ես, որդեա'կ իմ:
Սիրեմ գիշեր մըթագին
Որ ալսակէ իւր վեհ գեղ
Ակունքներով իւր թագին
Լուսաւորել ամէն տեղ:
Բայց զոր սիրեմ կաթոգին,
Երջանկութեամբ, հաւատով,
Դու ես, որդեա'կ իմ:
Սիրեմ տեսնել ովկիան
Կատղած վազել դէպ յերին,
Եւ հետեւիլ լըռելեայն
Մարգին գողարիկ առուակին.
Բայց զոր . . .

Սիրեմ Հաստչին տուրքն անհուն,
Զըւարթ ժըպիտը գարնան,
Ծաղկած ամառն ու աշուն
Եւ սառոյցները ձըմբան :

Բայց զոր . . .

Թարգմ. Հ. ԱՐՍԻՆ ԴԱԶԻԿԵԱՆ

(Թագմալկա)

63. ԶԱՐՆՈՒԱԾ ՈՐՍՈՐԴԻԸ

(ՀԵՔԵՍ.Թ.)

Անկովս ուղիներէ, օձի ճամբաներէ՝ քարերուն
վրայէն Այծեամ մը կը փախչի. անցած տեղերէն
կարմիր արփին կաթկթած է ու քարերը դեռ թաց
են. կը վազէ՛ կը հեռանայ, կոտոշները քարեր կը
դլուրեն դարմար : Ապառաժներուն վրայէն ցատ-
քելով, կաքաւի ձագերը թոցունելով իրենց բոյ-
նէն ու լեռներէն թաւալող ջուրերը պղտորելով՝
կը ալանայ Այծեամը, կը փախչի . սիրտը ուժգին
խռոված է . վախը խիստ ըլլալու է :

Հեռան, մարդ մը կ'երեւի, կապարճը ու-
ախն, աղեղը լարած՝ նետը կը քաշէ : Վարէն, այդ-
քան վարէն նետն իր նշանին չի կընար համնիլ.
լեռները ապառաժներ են ու ճամբայ մը չերեւիր
դոր գագաթը տանի . այդ տեղերէն մինակ մողէգ-
որ գագաթը տանի . այդ տեղերէն օձի ոտք ունենալու է :

Փախաւ Այծեամը ու Որսորդը անոր ետեւէն :
Բայց ճամբայ չիկայ ու զեռունի ոտք հարկա-
ւոր է մագլցելու համար . ելաւ, ելաւ Որսորդը
Այծեամին հետքերէն կաթկթած կարմիր ցայտե-
րուն ուղիով որսորդը գնաց՝ մոոցած թէ լեռը մահ-
ուան կը տանի ու իջնելու համար աղ անդամ մ'ալ
ճար չիկայ : Այծեամին գնտակ նետողը անէծքով
կը մեռնի :

Գագաթն հասաւ ահա : Բայց Այժեմը . . .
չի կար , քարելն իրենց ճեղքերուն մէջ առին թէ
լեռներն իրենց անձաւներուն մէջ պահեցին զինքը ,
ով գիտէ . Որսորդը շատ փնտռեց , բայց չի կրցաւ
դանել զանի :

Կատաղի մոլեգնութեամբ խորտակեց քարին
կապարծը , նետը ու աղեղն ալ և անոնց կտոր-
ները հովերը տարին :

Հոս ու հոն արծիւներ կը ճէին ու ահագին
թեւերնուն թափ կուտային . անոնց բոյներուն մօտ
փոտած ոսկորներ ու անդղի կտուցով ցեցքուած
անձանաչ դիակներ ինկած էին : Հիմա կտրին Որ-
սորդը լեռներուն մէջ մինակ , կը վախնայ ու ա-
նոնց մէջ արձագանդող իր անհաստատ ոտքերուն
թփոտուքը զինքը կը խոռովէ :

Զառիվերը դիւրին , բայց զառիվարը ահար-
կու է . մոռցած է թէ ուրկէ վեր ելած է ու ճամ-
բայ մը չի կայ որ զինքը վար տանի : Աւաղ , Այժ-
եամին որսը անիծուած է ու հալածող որսորդը
տանջանքով կը մեռնի :

Մինակ , կայնած է լերան վրայ , հովերը մա-
զերը կ'ալեկոծեն ու բոպիկ ոտքերէն ալ արիւն
կը մղի . յուսահատ է , ալ չի կրնար իշնել . կեցաւ
հոտ , սպասելով մէկուն որ պիտի գար , մինչ առ-
ջեւէն մարախներ կը ցատքէին խումբով ու թեթև
թեւերով վար կը խոռոշէին . անոնց վար իշնելը
տեսաւ տխուր աչքերով ու հետեւեցաւ ակնար-

կով երբ թրթռալով կը կորսուէին . մերթ ընդ-
մերթ բգէզ մը միօրինակ բզզիւնով հանդարտ
ուութիւնը կ'ալմէկէր ու կը թռէր կ'երթար : Կե-
ցաւ հոտ , լերան գլուխը , աչքը անսպառ յոյսով
ուղղուած վարը , լեռներէն դարվար , սպասելով
մէկուն որ պիտի գար : Մահը եկաւ ու աչքերը
իրենց կոպիծներուն մէջ , բաց գլուխն ալ ուսին
վրայ գամեց : Ու լեռը հիմա իր երգն ունի : Վայ
անոր որ այծեամին նշան կը բռնէ :

Ո-ՌԵՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

(Ծաղիկ)

64. ՄԻԱԿԱՆԻՇ

Երէկ ապրիլի առաջին օրն էր ,
Բնութիւն՝ երջանիկ , երկինքը կ'օրհնէր .
Ամէն հոգւոյ մէջ վերարծարծէր յոյս :
Թըռչնիկք իրարու տային բարի լոյս :

Ամպեր նուրբ շվարչ էին յօրիներ
Երկնի ճակատուն , զերդ աղախիններ
Որ փութան զարդեր հագցունել հարսին ,
Մէջքին պարեգօտ եւ թելեր վարսին :

Այենքն ապրելէ գոհ երեւէին .
Եւ գոգցես , ձեռքը կողով մ'արփային ,
Ապրիլ , ծաղկանց հետ , իւր շուրջը սըփոէր
Նոր կեանք , նոր արեւ , զըւարթութիւն , սէր բ

«Բարի լոյս», միմեանց պատուհաններէն
Մընջէին աղջկունք որ ծաղիկ սիրեն .
«Բարե՛ւ, ի՞նչափս էք, այս ի՞նչ աղուոր օդ : »
Եւ հագած էին թեթեւ պարեգոտ :


Եւ մի գեռատի տեսայ ես աղջիկ
Որ պատուհանի մ'առջեւ, հանդարտիկ,
Նըստէր ձեռն ի ծնոտ եւ անկարեկիր
Ամէն այս խընդին, տօնին սիրալիր :

Շնորհալի դէմքին վերայ մի ակօս
Թեթեւ գըծած էր արցունք մըշտահոս,
Թէպէտ գեղեցիկ, թէպէտեւ մատաղ,
Այլ կարծես զառամ բան մ'ունէր, աւա՛ղ :

Կարծես սըրտոյըտած էր դէմ աշխարհի .
Կեանքն իրեն համար չունէր ինչ բարի .
Ապրիլ սէր չունէր եւ չունէր ծաղիկ,
Եւ կապոյտն ալ չէր բընաւ գեղեցիկ :

Այս ծիծաղներուն մէջ այդ արտասուք,
Այս մեծ հիմենին առջեւ այդ մեծ սուգ
Լըցին զիս անհուն ցաւով, ասլութեամբ
Եւ պատեց աշերըս տրտմութեան ամպ :

Երբ այսպէս ապշած խորհէի, տըրտում,
Հոգիս բըռնուած վըշոով անպատում,
Դէպ իմ կողմ դարձաւ դէմքըն գեղանի,
Եւ տեսայ, թըշուա՛ռն էր միականի :



65. Ս Ո Խ Ա Կ

Գարնան գեղեցիկ երեկոյ մը մանկիկ մը ուշ-սուցին հետ անտառին եղերը կը պարտէր . Յան-կարծ սոխակի ձայն մը լսուեցաւ . « Ի՞նչ գեղեցիկ կարծ հովակի ձայն մը լսուեցաւ . « Ի՞նչ գեղեցիկ ներդաշնակութիւն » ըսաւ Պօղոս երկար ժամանակ հիացմամբ մոխիկ լնելէն ետքը, « Կետաքըքրութիւնս կը շարժի այս գեղեցկագոյն երգը մօտէն լսելու . Քիչ մը առաջ երթանք, ուսկից կուգայ այս ձայնը » : — « Աղէկ զգուշացիր, ըսաւ ուսուցիչը, սոխակը այնպէս վայլենի թուշուն մ'է որ մեր քիչ մը մօտէնալը բաւական է խրտչեցնել զինքը ու երգը դադրեցնել տալ » : — « Բայց ինչո՞ւ համար, ըսաւ դադրեցնել տալ » : — « Բայց ինչո՞ւ համար, ըսաւ դադրեցնել տալ » :

թեամբը ուրիշներունը կը խափանէ , բուի պէս
միայնութիւնը կը սիրէ : Ինչո՞ւ իր քաղցր ձայնը
մեր բնակութիւններէն հեռու կը հնչեցնէ , մինչ-
դեռ մեր պարտիզին փոքր ծառերն անդամ լե-
ցուն են անհամ և ձանձրացուցիչ ճռուղիւններով
թռչուններու » : « Այս , պատասխանեց ուսուցիչը
այն առակը մեզի իմացնելու համար է որ ստոյգ
արժանաւորութիւնը երկշու է և կը սիրէ առան-
ձին կենալ , և զայն ունենալու համար պէտք է
դիտնալ թէ ի՞նչ կերպով ստանալու է » :

66. ԻԼՄԻՆ ԼՃԻՆ ԶՐՈՅՑՀ

(ԱՌ ՖԻՆԱՆՏԱՑԻՍ)

Կիձն իլմէն սուրբ եւ մաքուր
Մընար երկրի մէկ խորչին մէջ թաքթաքուր ,
Մինչ իւր ափին մօտ բնակէին կոշտ ու բիրտ
Աւազակներ մարդախոչը քարասիրտ .
Զէին գիտեր հերկել հող
Կամ ուռոգել զայն ջուրերովը լըմիդ ,
Այլ զոհերով արինողու
Կը պըղծէին անոր ալիքը վըմիտ :
Իրիկուն մը կը լըսուէր
Շըխով ազմուկ մ'երկրէն վեր :
Կիձն էր որ իր ողջ ճռկերով անհամար
Թեւեր առած կը ոլանար :

Բընակիչք իսարուելով
Վաղեցին լըմին քով
Եւ կարծէին թէ անաշխատ
Պիտի գըտնեն ցամաքին վրայ ձուկն առատ ,
Սակայն տեսան թէ չէին ա'յլ ինչ մնացեր
Բայց միայն գորտ ու օճեր :
Հետզհետէ կը բարձրանար լիձն ի վեր .
Ու անտառին որսորդներ
Կ'ըսէին մեծ զարմացմամբ .
«Ի՞նչ է արդեօք այդ սեւ ամպ» :
Իսկ հովիւններն ալ անդին ,
«Ի՞նչ է կարապն այդ ճերմակ
Թեւատարած լայնարձակ
Որ կը թըռչի մէջ օդին» :
Գիշերն ի բուն
Ճամփորդեց լիձն հանդարտիկ ,
Սակայն այգուն
Տեղ մը իջաւ , եւ ուզեց
Այդ երկրի մէջ՝ ուր կ'ապրէին լաւ մարդիկ ,
Հնարել իրեն վայր մը մեծ .
«Եթէ հընձել կ'ուզէք հիմա ,
Պատրաստ եղիք» , կը գոչէր նա :
«Ո՛հ , ինչո՞ւ չէ , կ'ըսեն բարի մարդիկն այն ,
Եթէ հաճիս մեր արտն ու մարգն ուսոգել» :
Կը հաւանի լիձն անարգել .
Յատակածիր մը կը բանան խոր ու լայն ,
Ու լըմին շուրջ ապահով
Թումբեր կանգնեն մատաղ ծառեր տընկելով :
Կը զետեղուի լիձն իսկոյն
Հետ իր բոլոր ձըկներուն :
Այդ լայնանիստ տեղոյն վրայ

Այնպէս հանգիստ եղաւ նա
Որ ո՞չ երբեք խորհեցաւ ալ
Թողուշ երկիրն ու հեռանալ.
Անտի եւ այսո՛ ամէն դի
Արտերն եղան յոյժ յուռթի .
Եւ ամէն տարի երիտասարդ , ծեր ու կին
Որ գան պարել մօտ այդ լըճի եղերքին .
Կը հըսչակեն երգ ի բերան
Անոր բըզիսած բիւր բարիքներն բազմերան :

ԽՈՒՏԻ Մ. Գ. ԴՈՒՐԵԱՆ

67. ՍՍՀԱԿ ՊԱՐԹԵԻ ԵՒ ՄԵՍՐՈՊ

Սահակ Պարթեւ , Մեծն Ներսիսի որդին ,
յաջորդեց Ասպուրակէս կաթուղիկոսի 399ին : Ս.
Գրիգորի վերջին արու շառաւիղն էր Սահակ , որ
յունարէն լեզուն սորված էր կ. Պօլիս և լաւ ծա-
նօթութիւն ունէր Յոյն եկեղեցւոյ սուրբ հարց
գրուածներուն : Միշտ օրհնուած պիտի մնայ յի-
շատակն այս մեծ Հայրապետին՝ որուն ամբողջ
կեանքը նուիրուած էր եկեղեցւոյն և ազգին : Ինքն
էր որ հաստատեց եկեղեցիներ , վանքեր և դպրոց-
ներ , մասնաւորապէս Ս. Մեսրոպի գործակցու-
թեամբ : Բայց իր գլխաւոր գործը պիտի մնայ
միշտ Աստուածաշունչի երկրորդ թարգմանութիւնը ,
որ հին մատենագրութեան պսակն է :

Խոր ծերութեան մէջ , իրը իննսուն տարե-
կան , վախճանեցաւ Սահակ Պարթեւ 439ին և ամ-
փոփուեցաւ իր ծննդավայրին մէջ Աշտիշատ գիւղը :

Իսկ Մեսրոպ Տարօնոյ Հացեկաց գիւղէն էր ,
Վարդան անունով մարդու մը զաւակ , որ տղայ
հասակէն լաւ տեղեակ էր յոյն , պարսիկ և ա-
սորի լեզուներու : Մեսրոպայ գլխաւոր գործն է
հայ գրերու գիւղն , որով ազատեցաւ ազգն օ-
տար գրերու գործածութենէն : Իբրեւ ուսուցիչ
և առաջնորդ , իբրեւ վարդապետ մեծամեծ ծա-
ռայութիւններ ըրաւ , ինքն էր որ բովանդակ ազ-
գին մէջ լուսաւութիւն տարածեց , վանական
գին մէջ լուսաւութիւն կազմեց : Օգտակար եղաւ ոչ
միաբանութիւններ կազմեց : Օգտակար եղաւ ոչ
միայն իրեններուն , այլ և գրացիներուն իսկ ,
վրաց և Աղուանից գրերը գտաւ , որով կարելի
եղաւ Ս. Գրոց թարգմանութիւնն ընել նոյն լե-
զուներով :

Ս. Սահակի մահէն ետքը , վեց ամիս միայն
ապրեցաւ Մեսրոպ , 440ին վախճանեցաւ և մար-
մինն ամփոփուեցաւ Օշականի մէջ :

68. ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԳԱՆԳԱԾՈՂ ՈՒՍՎԱՌՈՒՇԻՔ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԶԱՊԻԼ, ՆՈՒԱՐԴ

(Տեսարանը կը ներկայացունէ դասարանն մը, պատէն կախուած աշխարհացոյց քարտէսի մը առջեւ կանգնած է Արուսեակ. Զապէլ եւ Նուարդ զրասեղանի վրայ նստած կ'զբաղին)

ԱՐՈՒՍԵԱԿ

...Պալթիկ ծովուն մէջ թափին չորս գետեր .
Նիէմին, Վիսթիւլ, Լատիւն եւ Օտէր .
Կասպից ծովուն մէջ՝ երկու գետ հոկայ,
Ուրալ եւ . . . Ուրալ, Ուրալ եւ . . . Վոլկայ :

ԶԱՊԻԼ (Ընդմիջելով)

Բայց մտքէդ կարգալ չե՞ս կրնար, Արո՞ւս,
Միշտ արգելք կըլլաս գու իմ դասերուս .
«Nous avions fini, vous aviez fini,
Ils avaient fini, futur, ապառնի . . . »

ՆՈՒԱՐԴ (Ընդմիջելով)

Ճի՛շդ, վեց պարկ շաքար եւ հինգ եօթերորդ
Կոտորակ մընաց իբրեւ աւելորդ .
Առնելու համար նիշ ու քաջալաւ՝
Լըմընցուցի՛ բայց . . . հոգի՛ս ալ ելաւ . . .

ԱՐՈՒՍԵԱԿ

Թւաբանութեան պէս կայ դիւրին դաս . . .

Թիւերուն ծայրէն կը բռնես կ'երթաս . . .
Բաժնէ՛, թէ ամբողջն ընել կուզես կէս ,
Իսկ թէ շատցունել կը բազմապատկես .
Աշխարհագրութիւնն այնպէս չէ՛ սակայն .
Անթիւ անուններ կան, կարձ ու երկայն ,
Երբէք չը լսուած, անծանօթ, խրթին ,
Սըփուուած ասոտ անդ, աշխարհիս չորս գին ,
Քաղաքի, լերան, ծովու կամ գետի ,
Չոր ուզես չուզես գոց ընես պիտի . . . :

ԶԱՊԻԼ

Գաղղիերէնն հապա՞ , դիւրի՞ն է միթէ ,
Կրնա՞ս խոնարհել « être, avoir été, »
Այն անտանելի բայելն օժանդակ
Որք տասն անգամ ճեւ փոխեն այլանդակ ,
Եւ նախ , գոյական անուանց յոդնակին
Խոր բացառութեամբք պէսպէս ու կրկին ,
Եւ ածականներն ալ որոնց մէն մին
Խգական կ'ըլլան . . . ինչպէս որ կամին . . .
Եւ ասոնք որ մեզ գժուար կ'երեւին
Քերականութեան ծա՛յրն են տակաւին . . . :

ՆՈՒԱՐԴ

Գըլլովսս կախած , կէս ժամէ ի վեր
Քովէ քով շարեմ բիւրաւոր թիւեր .
Վարժուհոյն տըւած սա խառնակ խնդիր
Կրնա՞ս նէ լուծէ , կրնա՞ս նէ գըտիր . . .
Բազմապատկութիւն , բաժանում , գումար
Կամ բարձում ըրէ անվերջ , անհամար ,
Փընտըսէ կանոնն , օրէնքն ու սկատճառ ,

Եւ աշխատէ՞ որ՝ քըսան պարկ աճառ ,
Չորս յանքար երկաթ , հինգ ինչ գարի
Վերածես դիւրաւ լսահուէ շաքարի . . . :

ԱՐՈՒՍԵԱԿ

Ամէն ուսմունք ալ դժուար են , քո՛յը իմ ,
Եւ ես շատ ատեն կ'ըսեմ , կը խորհիմ
Թէ մենք աղջիկ ենք , եւ թէ աղջըկան
Համար այսքան բան սովորելու պէտք կա՞ն . . . :

ԶԱՊԷՆ

Ես բոլոր դասերս ուսնիլ կը հոգամ ,
Բայց իմ մոռքէս ալ կ'անցնի շատ անգամ
Թէ լոկ երեք դաս կայ մեզ օգտակար
Ջեւագիտութիւն , ձեռագործ ու կար . . . :

ՆՈՒԱՐԴ (Բ'ՆԴԻՔԵԼՈՎ)

Չո՛րս , չորրորդ մ'ալ կայ , դաշնա՛կն , անիկայ
Չուզող , ըստ սիրող աղջիկ հատ մը կա՞յ . . .
Ի՞նչ հաճոյք սովորիլ ու զարնել դաշնակ ,
Գովեստ , յոմբիման լըսել շարունակ . . . :

ԱՐՈՒՍԵԱԿ

Մամիկըս կ'ըսէ՞ թէ « Ամէն ատեն
Աղջիկ մը կ'ապրի իւր տասը մատէն . »
Արդ երբ մեր մատներ , նիհար թէ մըսեղ ,
Գիտնան գործածել մլրատ եւ ասեղ ,
Բանիլ թաշկինակ , պըռօտէ , տանքէլ ,
Ի՞նչ պէտք մեզ օտար լեզու աւանդել . . . :

ԶԱՊԷՆ (Բ'ՆԴԻՔԵԼՈՎ)

... Կամ դաս տալ թէ իւր խոշոր զանգուածով ,
Ասկա՞ , Ափրիկէ եւ Ամերիկա
Քանի՞ ծոց , նեղուց , նաւահանգիստ կայ . . .
«Անլէտ բաներ են , կ'ըսէ մայրս , անպէ՞տ ,
«Բլլալիք ունի՞ս , աղջիկ՝ նաւապետ . . . : »

ՆՈՒԱՐԴ

Լլալ չենք կրնար , ո՛չ ալ փափաքիր ,
Ո՛չ վաճառական , ո՛չ ալ գըրագիր ,
Քանզի այդ պաշտօնք են մեզ անյարմար ,
Այնպէս չէ՞ , ուստի եւ մանչոց համար ,
Որք պիտի երթան խանութ ու շուկայ ,
Թըւաբանութեան թերեւըս պէտք կայ :

ԱՐՈՒՍԵԱԿ

Բայց մենք՝ բան մը կայ որ չենք մըտածեր .
Միթէ մեր պաշտպանք խոհական ու ծեր
Չե՞ն գիտեր , երբ մեր ուսմանց հոգ տանին ,
Թէ ո՞րն է անպէտն , ո՞րն է պիտանին .
Իսկ մեր ուսուցիչք անմիտ կամ յիմա՞ր
Են որ այնքան շունչ վատնեն մեզ համար . . . :

ԶԱՊԷՆ

Իրաւունք ունիս , լա՛ւ ըսիր , Արուս ,
Մենք անփորդ ենք դեռ , եւ դեռ շատ թերուս ,
Եւ մեր խնամակալք անշուշտ լաւ գիտեն
Ինչ որ պէտք է մեզ : Սակայն շատ ատեն
Այնքան դաս ունինք , գիր , խնդիր այնքան
Որ սերտողութեան ժամեր քիչ կուգան :

ՆՈՒԱՐԻ

ԷՇ , իրիկուններն , երբոր տուն կ'երթաս ,
Կրնաս ճաշէն վերջն ալ պատրաստել դաս ,
Ես , ամէն գիշեր , նախ ամփոփ մտքով
Ժամ մը կ'աշխատիմ մեծ սեղանին քով ,
Յետոյ կը քընեմ — եւ առաւօտուն
Դաս մը սովորած եմ , երբ գամ վարժատուն :

ԱՐՈՒՍԽԱԿ

Պիտ' աշխատէի ես երէկ գիշեր ,
Բայց հայրս երբ եկաւ , ժամն արդէն ուշ էր .
Մայրս անոր ցուցուց դերձակին հաշիւ ,
Հայրս առաւ զայն , եւ , քննելով ուշիւ ,
Ըսկըսաւ պոռալ մօրս երեսն ի վեր՝
Թէ հարի' կը զուրուշ եւել էր տըւեր . . .
Մայրս ալ հօրս արդար բարկութեան փոխան ,
Զը կրցաւ լըռել , տըւաւ պատասխան .
Հայրս ալ հայհոյեց առնող , տըւողին . . .
Փախայ' . . . եւ մտայ լըլով յանկողին . . .

ԶԱՊԻԼ

Երէկ գիշեր ալ մեզ հիւրեր եկամ ,
Այր ու կին մ'ազնիւ , կիրթ , ուսումնական ,
Որք խօսակցութեան մէջ երբ պատմեցին
Թէ իրենց Բարիկ գացած միջոցին՝
Ծովէն նեղուեր են , մայրս հարցուց ժպտուն՝
Թէ «ո՞ւր գացեր է , ո՞ր Բարիս տուտուն . . .»
Այրն յարեց . « Կ'երթանք օր մ'Ամերիկայ . . .»
Մայրս ըսաւ . « Աղէն՝ Հըրէից քո'վ կայ . . .»
Հիւրերն իրարու նայեցան շիտակ . . .
Ես ամընալէս՝ անցայ գետնին տակ . . .

ՆՈՒԱՐԻ

Դըրացի մ'ունինք անուս այլ հարուստ ,
Որուն գաղղիերէն լեզուաւ՝ ի հեռուստ՝
Հետազիր մ'ուղղեր էին անցեալ օր .
Զէր կրնար կարդալ , եկաւ խնդրել որ
Դիրմ որ ո'չ խրթին էր , ո'չ ալ երկայն ,
Կարդամ . — կարդացի , թարգմանեցի զայն .
Գոհ եղաւ : Երէկ գիշեր , փոխարէն
Ծառայութեանն որ մատուցի իրեն
— Ուրախութենէս հոգիս կը ցնծայ՝ —
Ոսկեղծ գրքոյկ մ'ինձ բերաւ ընծայ . . . :

ԱՐՈՒՍԽԱԿ

Նըւարդին ըսածն իմացա՞ր . Զապէ՛լ .
Եթէ չը գիտնար երկու բան կապէլ ,
Կարդալ գաղղիերէն հեռագիր , նամակ ,
Օգուտ մը քաղած պիտ' ըլլա՞ր հիմակ .
Դիր կարդացունող եւ , իրրեւ նըւէր ,
Գրքոյկ մը բերող պիտի գըտնըւէ՞ր . . . :

ԶԱՊԻԼ

Հապա , եթէ մայրս , իւր թարմ ատեններ
Աշխարհագրութիւն դաս առած լինէր ,
Պիտի գիտնար թէ — ինչպէս գիտես գուն —
Նոյն բան չեն Բարիկ գացաքն ու . . . տուտուն ,
Եւ թէ պաստառցու կըտաւէն ի զատ ,
Ամերիկայ մ'ալ կայ , աշխարհ առատ :

ՆՈՒԱՐԻ (առ Արուսեակ)

Եթէ քու մայրդ ալ , ի՞նչ հեռուն կ'երթաս ,
Թըւագիտութեան առած ըլլար դաս :

— 98 —

Իբրեւ հաշուագէտ արթուն տանտիկին,
Պիտ' եւել ըստակ չը տար դերձակին,
Եւ ո՛չ ալ քու հօրդ հետ փոխանակեր
Վիրաւորիչ, ծանր, անպատեհ խօսքեր :

ԱՐՈՒՍԵԱԿ

Թըւագիտութեան դէմ բուռն եւ ազդու
Գանգատ կ'ուղլէիր քիչ մ'առաջ եւ դու,
Անպէտ դատէիր այդ ուսումն . եւ արդ
Զայն կը սլաշուպանե՞ս, կը գովե՞ս, նուա՞րդ :

ԶԱ.ՊԼ.1. (առ Արուսեակ)

Դու ալ կոչելով մամիկորդ վըկայ՝
Օտար լեզուի պէտք, կ'ըոէիր, չը կայ.
Աշխարհազրութիւնն ինձ անպէտ թըւէր,
Բայց . . . հէք մօրս պղտիկ մընալէն ի վեր . . .

ՆՈՒԱՐԴ (Ընդմիջելով)

Համոզուեցար թէ այդ գիտութիւնն ալ
Կրնայ իւր օգուտն ու պէտքն ունենալ,
Թէ լաւ տանտիկին մ'ըլլալու համար,
Չը բաւեր գիտնալ միայն ձեւ ու կար . . .

ԱՐՈՒՍԵԱԿ

Ուրեմն այն դասերն, որք բոլորապին
Մեզ աւելորդ կամ անպէտ կ'երեւին .
Հնտիր տարերք են, նիւթեր թանկագին,
Որք զարգացում տան մեր տըհաս մտքին :

ԶԱ.ՊԼ.1.

Է՛հ, ուրեմն ի՞նչ փոյթ թէ թափենք քրտինք,
Սովորինք այն ինչ որ գիտնալ կը պարտինք .

Մեր բերնէն չելե՛ն գանգատանք, հառաչ,
Շա՛տ շան կարդանք, երթանք մի՛շտ յառաջ :

ՆՈՒԱՐԴ

Ուխտենք աշխատիլ միշտ, գիշե՛ր եւ տիւ,
Եւ մեր ընտանեաց րլանք զարդ, պատիւ . . .
— Բայց խօսքով կ'անցնին մեր վայրկեաններ թանգ,
Օ՛ն, զանգակն հնչեց, դասարան երթանք :

Ա.ՂԵ.Բ.Ս. Գ. ՓԱ.ԽՈՍԵԱՆ

69. ԼՕՇԱԿ ԲՈՅՄ

Լօշտակ անունով բոյս մը կայ, որ Մշոյ մէջ
յաճախ կը գտնուի, մանաւանդ Ա. Կարապետի
վանքին բոլորը, մացառներու մէջ կ'արձակէ իր
ոստիկերը, որոնք կը բարձրանան և կը պատաժ-
ուին փայտերուն, և անոնց թանձրախիտ տերեւ-
ներուն մէջ կը խառնեն իրենց լայն տերեւները՝
որոնք ձեւով նման են խաղողի որթի տերեւի,
իրենց ցօղունը նման որթի բարունակի և խաղողի
ողկոյզի ալ շատ նման ողկոյզներ ճութ ճութ կը
կախէ, միայն թէ անոր պտուղները մանրիկ են
խաղողինէն :

Ա.յս այն բոյսն է, որուն արմատը մարդանման
ըլլալ կը համբաւեն, և թէ մինչեւ անդամ անոնց
մէջ արուն և էգն ալ յայտնի են : Թէ այս ար-

մատը հանելու համար յատուկ աղօթք մը ունին, և թէ՝ երբ կը կարեն իւր միւս կտորներէն, ահագին ձայնով կը ճշայ. ուլ մը կամ հաւ մը կը կապեն այդ մարդարմատին, որպէս զի երբ ճշայ այն ուլը կամ հաւը անոր ձայնին զոհ ըլլայ: Եթէ այդ հնարը չըլլայ, արմատ հանող մարդը կը մեռնի: — Այս հնարքով ուլ մը կամ հաւ մը կ'ուտեն հանող թշուառականները: — Ամենավերջին աստիճան գառնութիւն ունի այդ արմատը. և իդ. կերպ ցաւոց և ախտից դարման է: Բաւական փափաքանօք և թանգ գնով կը գնեն զայն նոր նախիջեւանէն, հին Խրիմէն և այն կողմերէն Մշու Ս. Կարապետ եկող ուխտաւորներ:

70. ԵՂՆԻԿ

Խիտ է անտառը, բարձր և տերեւախիտ են անոր ծառերը և գեղածիծաղ են անոր առապարաները, երբ գարունը անոր մէջն է: Խոկ երբ փչէ սառ քամին, երբ թափուին գեղնած տերեւներ, երբ ձիւնը խիտ առ խիտ գիզուի ծառերու ճիւղերու վրայ, տխուր է ան, սոսկալի, մութ և խորհրդաւոր . . . :

Անտառին մօտ քարայր մը կար, ուր կը բնակէր եղնիկ մը, և այդ եղնիկը սիրուն ձագուկ մը ունէր:

Առտու մը ձագուկը շատ զարմացաւ, երբ տեսաւ որ իրենց բնակարանի մօտ և ամբողջ անտառը ծածկուած էին սառն սպիտակ սաւանով մը: Զիւն էր, որ զիշերն ի բուն տեղալով՝ ծածկեր էր մանր թփերն իսկ, որոնց շուրջը մայր եղնիկը կը սիրէր մամուռներ փնտռել իր ձագուկի համար:

— Երթանք անտառը, մտածեց մայր եղնիկը, գուցէ ուտելու բան մը գտնենք:

Շատ հոտոտեց ծառերու շուրջը պտըտելով, պեղեց ոտքերով և վերջապէս գտաւ քանի մը դալար խոտեր, որոնցմէ բաժին հանեց իր ձագուկին:

Բայց ձագուկը հանգիստ չէր մնար, կ'ուզէր խաղալ այդ նորատեսակ գեանի վրայ. կը վազվեզէր, կը զարմանար, երբ իր ոտքերը կը խրուեին ձեան մէջ. կը մտնէր թուփերու տակ, որոնց գպչելով կը զուարձանար:

Եւ այսպէս հետզիետէ կը հեռանար, մոռնալով թէ մայրը հետը չէր:

Վարդի թուփ մը գտաւ, անոր արմատի մօտ բուսած խոտերը սկսաւ կրծել, պահ մը գունչով սառ ձիւնը լզեց, պահ մ'ալ գլխի վրայէն թոչըտող թոշուններուն նոյեցաւ:

Յանկարծ «բնւմ» ձայն մը լսեց, սաստիկ վախցած վեր թռաւ տեղէն, մի քանի քայլ ցատ-

կելով փախաւ . յետոյ կանդ առաւ , ականջները
սրեց ու սպասեց :

Կը կարծէր լսել իր մօր ձայնը , որ կողկողա-
զին «մէ է՛ է՛» կը պոռար : Թռաւ թփիկին վրայէն
և սկսաւ գէպի ձայնը լսուած կողմը վազել :

Ձայնը հետզետէ կը մօտենար . ծառի մը
շորջը դարձաւ հեւալով , վազեց բաց միջավայր
մը , և հեռուէն ձեան վրայ բան մը նկատեց , ո-
րուն վրայ ժողվուած էին շատ մը ագռաւներ :

Ենչասպառ մօտ վազեց և ճանչցաւ իր մայրը ,
որ ընկած՝ կուրծքէն դուրս բղխող արիւնով կը
ներկէր ձիւնը , որ երբ տեսաւ ձագուկը , թոյլ
ձայնով «մէ է՛ է՛» մը դոչեց և գոցեց աշքերը :

Փոքրիկ եղնիկը հոտոսեց մայրը . նախ չիմա-
ցաւ թէ ինչ էր եղած . մայեց , ոտներով ու դուն-
չով շարժեց մայրը , լզեց Պաղ էր մայրը ,
անոր սառած աշքերն բաց , բայց անշարժ էին :
Մայեց աղիողորմ ձայնով . չորս կողմը նայեցաւ .
կարծես կ'զգար թէ բան մը եղած է և օդնու-
թեան կ'սպասէր :

Հետզետէ խաւարը տիրեց ամէն կողմ , ագ-
ռաւները թռան գացին , հովը սաստկացաւ և ձիւն
սկսաւ գալ

Երբեմն երբեմն կը լսուէր ձագուկին թոյլ
ձայնը «մէ է՛ է՛»

Միւս օրը , ծերունի որաորդ Յակովը հրա-

ցանը ուսը՝ անտառը մոռաւ աղուէս որսալու և երբ
մթնալուն ատեն կ'ուզէր ետ դառնալ իր որսացած
քանի մը աղուէսներով՝ թոյլ ձայն մը լսեց՝ որ
եղնիկի ձայնի կը նմանէր :

Հետաքրքրուեցաւ , ձայնին կողմը գնաց . հե-
ռուէն սեւ իր մը նշմարեց : Մօտեցաւ և նայեցաւ :

Փոքրիկ եղնիկն էր , դունչը մօր զլիսի վրայ՝
մեռած էր . իսկ քանի մը կաթիլ արցոնէք ցրտէն
սառած՝ կեցած էին անոր ակնալրիւրներու վրայ :

Աստուած չէր ուզեր որ մօր մեռնելէն յետոյ
խեղճ եղնիկը ապրէր :

71. Ա. Բ Մ Ա. Շ Գ. Ի Ւ Ղ. Բ

Ելի՞ր բարձրերը և պիտի նկատես հոնկէ ա-
ռատ և հոլանի հորիզոնի մը ջերին ծոցը՝ ցանու-
ցեր անտառակներ , որ ճգնութիւն կը քարոզեն ,
դոնդող և ուրեք ուրեք այգեւէտ րլրակներ , որ
կը կուսացունեն անկոխ կանաչութիւն մը , ոլրուտ
և անձուկ հովիտներ , ծփանուտ արտորայք , որ
առաւօտէ առաւօտ սոխակներու և թռչուններու
փախստեայ երամի մը երգարան ըլլալէ ետեւ՝ միշ-
ջօրէն մինչեւ վաղուին առաւօտն ալ կը լուն վայրի
ամօթխածութեամք մը : Խջիր վարերը , գիւղը կամ
դաշտն , և հոն արտի մը , հին աղբիւրի մը , ալ-

նակի մը , պարտիզակի մը շուրջը պիտի հանդիպիս բոպիկ բացգլուխ արթուն լաճերու , որ կամ մշակութեան կը սպասարկեն , կամ ջուր կը կրեն և կամ բարձած թթենի սստեր՝ կը տանին իրենց տուները , ոմանք ալ անորոշ խաղերով զբաղած . լութիւնն՝ աչքի զարնող յատկութիւն մըն է գիւղին մէջ և շերամի գործը՝ տիրող արհեստը : Տանտիկիններն ու աղջիկները ժի՞ր են մրջիւնի նման . այրերը բանդէտ են և ուսումնասէր ալ , ասպնջական ու պատուասէր :

Արեւը Արմաշի վրայ ունի տեսակ մը վայրենի մերկութիւն . իր կալրւածք՝ բնութեան պէսպիսակ ու զուարձընծայ ճոխ տեսարաններ ընդգրկող յատակ մը չէ (թերեւս բաց ի մայիսի 15 օրերէն) , այլ դաշտ , բլուր , ձոր , անտառ , այդի և խուն մրգաստան՝ խնկաւորուած անապատական հոտերով՝ հաստ և հարուստ ժպիտներով միայն կը համբուրեն անոր կիզիչ ճառագայթները , որ արդեւ տուն բանւորին յորդ քրտինքովը կ'արդիւնաւորեն ու կ'եփեն ան ատոք ու համեղ ցորենը , որմէ կը պատրաստուի Արմաշի սննդաշատ կոյս հացնալ : Շատ տեղ ալ միապաղաղ ցամաք մը և այրուտ հող մը՝ լծորդուած տամիկախառն տաքութեան մը հետ՝ ոչ սակաւ կ'այլակերպեն տուրնչենային պայծառութիւնը , և յաճախ առիթ կ'ըլւան ջերմի , թանջքի ու եգիպտական հեղձանչութեան : Արմաշի առաւոտք՝ զոր գրեթէ միշտ կը

նսեմացունէ Ատարազարի մոայլ ոլորտը՝ չունի գիւղի վարդ գրգութիւնը և իրիկունն ալ քաղաքի վառ ու բանքեր եռեւեփքը . արեգակն հսկայ և շոյտ աշխարհակալի մը նման բոցատիպ կ'ելլէ հոն իր միգամած ու տափակ հորիզոնէն , և վիրաւոր ու արիւնոտ աչքի մը պէս՝ կարծես սովորականէն աւելի արագուն՝ շրջաբերելով կը դառնայ արեւամուտք անժպիտ ժրութեամբ . ճիշդ այսպէս տեսած եմ զինքը ովկիանի վրայ ալ :

Անոր համար գիշերն աւելի ցնծալից ու ներշնչող ալ է հոն , ուր աստղապար հարսի մը նման կուգայ ուռճալիր լուսինը ցանելու իր արծաթ ծիծալները՝ ցերեկուան անտանելի տապին վրայ . անոր համար վանքն ալ աւելի գիշերն է որ կը զգենու պատկառելի զուարթութիւն և երկնող սպիտակ լութիւն մը կրկնակի ծալլուած , որմէ կը ծնի վայրին կոյս կրօնքը : Մօտերը չի կայ լեռ մը բարձր այնքան որ յիշեցունէ Ոլիմպոսը կամ Սինան , ոչ ալ ծով մը կամ ծովակ մը շարժուն , որ տայ միտքի առոյդ հաղորդակցութիւն :

Բաց ի ջաղացքէն ու ճոփիկ աղբիւրներէն՝ չորութիւնը բացարձակ է , բաց ի կարապետ աղբօր պարտէզէն և վանքին հոչակաւոր կեռասենիներէն ու այգիէն՝ անպտղութիւնը սալրտուցիչ է և բաց ի աշխատութենէն ու աղօթելէն՝ ամէն կեանք յուսահատեցուցիչ է հոն քաղաքացին համար :

(Մասիս)

8. 4. Մ.

72. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆ

Ճշմարիտ և անկեղծ եկեղեցականն օրհնութիւնն է ժողովրդեան : Նա միջնորդ մ'է Աստուծոյ և իւր ժողովրդի մէջտեղ . նա մարդ մ'է ապրող երկնից ու երկրի մէջտեղ : Բոց մ'է նա մըշտանուէր զոհի , որ երկրէ վեր կը սլանայ , քաւելու ժողովրդեան մեղքն և հայցելու յաւիտենական գութը . նա կ'աղօթէ ամենուն համար և փոխարէն ամենուն՝ երբ մարդիկ անտարբեր են կամ չուայտանաց մէջ կը մոռնան , երբ կը թուլայ մարդկային խիղճը , անոր ձայնը կը հնչէ հզօր . իր մասն միշտ կը ցուցնէ փրկութեան ճամբան : Նախախնամութեան գործակատարն է երկրի վրայ : Նա կ'ընդունի մեզ՝ երբ ոսք դնենք կենաց սեմին վրայ և կ'որդեգրէ մեզ եկեղեցւոյ անունով . նա կ'օրհնէ մեր սրտերու միութիւնը՝ երբ ընտանիքի խորհրդաւոր կապը կը հիւսենք , երբ կ'երթանք հողին մէջ հանգչիլ , նա տիսրանոյշ երգերով կ'ընկերանայ մեզ և մեր գերեզմանին վրայ կը կանգնէ խաչը :

Օրհնեալ ըլլայ ճշմարիտ եկեղեցականը :

(Մարդիկ եւ իր)

Ո. Յ. ՊԵՐՊՈՒԹԵԱՆ

73. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Խեղճ գործաւորուհի մը հիւանդանոց մը կը փոխադրեն խռչափողի անդամալուծոթեան մը պատճառաւ՝ որ համրացուցած է զանի : Տարապայման ցաւը կը բացատրուի հեծկլուանքներով և արցունքներու հեղեղներով : Բժշկապետը զանի խիստ դարմանումի մը կ'ենթարկէ՝ որ երկար ատեն ապարդիւն կը մնայ : Վերջապէս զիշեր մը որ իր սովորութեան համեմատ կը փորձէր շարժել իր խեռ կոկորդը . բառ մը դուրս կ'ելնէ : Կը խօսիր կոկորդը . բառ մը դուրս կ'ելնէ : Կը խօսուի , փրկուած է : Խօնչ կը յուսաք որ ընէ : Ծնունդ , պիտի կանչէ իր գժբախառութեան ընկերուշուց պիտի կանչէ . « կը խօսի՞մ » : Պիտի ըսէ հիները ու անոնց ըսէ . « կը խօսի՞մ » : Պիտի ըսէ այս բանը անոնց որպէս զի ինքն ալ իմանայ իր ձայնին շեշտը : Ոչ , կը ըսէ : Ժամը վեց , եօթը կը զարնէ : Մայրապետները իր ուտելիքը կը բերեն . ան նորէն չխօսիր , և միայն երբեմն , գլուխը վերմակին տակ պահած ցած ձայնով քանի մը վանկ կ'արտասանէ , ապահով ըլլալու համար թէ բժըշկուած է : Վերջապէս գուռը կը բացուի , բժիշկը ներս կը մտնէ և կը մօտենայ անոր անկողինին : Ան ատեն արտասուալից ժպիտով մը . « Տէր , կ'ըսէ անոր , կը խօսիմ և ուզեցի իմ առաջին խօսապահել զիս փրկողին :

74. Ա. Ք Ծ Ա. Ն Ո Ղ

Կառախումբը կը հասնի : Ա.քծանողը իր պաշտօնին գլուխն է , ձեռքը երկաթէ լծակին վրայ : Գիտէ որ գիծը պէտք է հոս աղատ ըլլայ , որպէս զի կարենայ անցնիլ ճեղընթաց կառախումբը՝ որ պիտի հասնի քանի մը վայրկենէն : Գիտէ որ եթէ պէտք եղած շարժումը չի տայ , ճեղընթաց կառախումբը սսակալի կերպով պիտի ջախջախուի իր կառախումբին զարնուելով : Ուստի աչքերը յառած մօտեցող վայրաշարժին՝ կ'սպասէ :

Զայն մը զինքը կը կանչէ . « հայրիկ , հայրիկ » . իր պզտիկ Յակոբն է . տղան չորս տարու է . ուրախ զուարթ կը վազէր դէպի իր հայրը . յետոյ սարսափած այն աղմուկէն՝ որ իր վրայ եկող կառախումբը կը հանէր , գետինը շարժելով , տղան կեցաւ գծերուն մէջ պոռալով . « հայրիկ » : Վայրաշարժը կը մօտենայ , հազիւ քանի մը մեթր հեռաւորութիւն կայ իր և տղուն մէջ :

Ի՞նչ պէտք է ընել : Տակաւին երեք երկվայրկեան կայ . հայրը կրնայ տղան ազատել . բայց ան ատեն հարկ է թողով լծակը , չկատարել շարժումը , թողով որ կորառին կառախումբեր՝ որոնց վրկութիւնը իրեն յանձնուած է : Զվարանեցաւ , և բողոքովին տժդունած , իր լծակին առջեւ մնաց , յուսահատ ձայնով մը պոռալով . « Փորի վրայ

պառկէ և մի շարժիր » : Տղան պառկեցաւ և աներեւութացաւ վայրաշարժին տակ : Ուրքան երկար երեւցաւ աքծանողին՝ վակոն-ներուն անցքը՝ որ իրմէ կը ծածկէր իր տղուն մարմինը : Վերջին վակոնը անցաւ . պաղ քրտինք մը կը ծածկէ հօր ճակատը . հազիւ կը համարձակի նայիլ . ի՞նչ պիտի տեսնէ այն տեղն՝ ուր պառկեցաւ տղան :

Տղան ողջ է . կառախումբը չէ դպած անգամ պզտիկ մարմինին՝ որ փակած է հողին :

— Յակոբս , անուշիկ Յակոբս , մէկ տեղու չի ցաւեցան :

— Զէ , հայրիկ , հոգ մ'ըներ : Եւ հայրը հեկեկալով կ'ուլայ , համբուրելով զաւակը : Քանի մը վայրկեան ետքը ճեղընթացը կ'անցնի շոդեպինդ տանելով ճամբորդներն՝ որ բան մը չտեսան և մտքերնուն իսկ չեն անցըներթէ իրենց վրկութիւնը կը պարտին այն խեղճ մարդուն դիւցազնական անձնուիրութեան :

75. Պ Ս Ա Կ Ը

Ամէն առտու , տունէն ելնելով փոխանակուղակի դպրոց երթալու , ներսէս կը թափառէր ժողովներն , անշնորհք տղոց հետ անցընելով ժա-

մանակին մեծ մասը և յետոյ, դպրոցին մէջ, բնականաբար յանդիմանութիւն լոելով կամ պատիժ կրելով : Երեկոյին զլիսիկոյ և գաղտագողի տուն կը դառնար ուշ ատեն՝ չհանդիպելու համար խիստ նայուածքին իր հօրը որ խեղճուկ գործաւոր մ'էր և հոգին կը հանէր ընտանիքն ապրեցնելու համար : Հօրը մէկ ձեւին վրայ շուտով անկողին կը մտնէր ուր մայրն, աչքերը լալէ կարմրած, գաղտուկ կը տանէր այն ճաշն՝ որմէ հայրը զրկած էր իր որդին : Այն ատեն տղան խեղճ կնոջ վիզը կը պլաւէր և կը խոստանար մէկ մ'ալ չգործել այդ տեսակ յանցանք : Յաջորդ օրը տղան մոռցած էր առջի գիշերուան խոստումը :

Իրիկուն մը տուն դարձած ատեն ապշերով կանդ առաւ սենեկին դրան առջեւ : Իր հայրը, Նիկողոս, անկողին մէջ պառկած էր . գլխուն կողմը մայրը կուլար : Մահամերձ հայրը ճանցաւ զաւկին քայլը, բացաւ ծանրացած աչքերը և հոգեվալք ձայնով մը կանչեց զայն : Ներսէս մօտեցաւ վախնալով :

— Զաւակս, ըստ Նիկողոս, տղուն գլխուն վրայ դնելով իր գործաւորի բրտացած ձեռքերը՝ զոր ոգեվարն արդէն պրկած էր, զաւակս, ահա կը մեռնիմ : Այսօր յանդիմանել չեմ ուզեր քեզ, բայց այսօր ալ փողոցները պտըտեր ես, իմացայ . դպրոց մարդ զրկեցի՝ հոն չէիր . հապա եթէ մեռնէի առանց քեզ օրհնելու . . . :

Խոնդիւն մը հօրը խօսքերն ընդհատեց :

Փոքրիկն ներսէս արցունքի հեղեղներ կը թափէր : Առանց մահուան վրայ որոշ գաղափար մը ունենալու, կ'զգար թէ մեծ աղէտ մը կ'սպառնար իրենց :

Օրհասականը շարունակեց՝

— Մօրդ հետ մինակ պիտի մնաս : Շատ աղքատ ապրեցանք, ես մեռնելէս վերջն ալ աւելի աղքատ պիտի ըլլաք : Մտիկ ըրէ, ներսէս, եթէ կ'ուզես որ հոդիս հանդարտ փչեմ, խոստացիր ինձ որ մէկ մ'ալ մայրդ չլացընես :

— Ո՞հ, հայրիկ, կ'երդնում, հառաչեց տղան :

Խեղճ գործաւորին յուղարկաւորութիւնը կատարուեցաւ : Հէք այրին, իր զաւկին ձեռքէն բռնած, հետեւեցաւ իր ամուսնոյն մինչեւ վերջին բնակարանը : Սակաւթիւ յուղարկաւորներ կը մեկնին . միայն այրին հոն է տակաւին իր զաւկին հետ : Երբ գերեզմանափորն ալ իր գործը կ'աւարտէ ու կը մեկնի, աղէխարշ ձայնով մը .

— Պսակ մ'անգամ չկայ,

կը մրմնջէ խեղճ կինը :

Ներսէս չպատասխանեց :

Յաջորդ օրը, Ներսէսի դաստիարակը շատ զարմացաւ առտուն կանուխ դպրոցը տեսնելով այս տղան . շատ զգաստացած էր այն օրէն ի վեր : Այսէն օր ուրոշեալ ժամուն դպրոց կուգար, օրինակելի բարերոշեալ ժամուն դպրոց կուգար, օրինակելի բարերոշեալ ժամուն դպրոց կուգար :

Մրցանակաբաշխութեան օրը ներսէս խնդրեց
մօլմէն որ ներկայ գտնուի հանդիսին։ Մայրը նախ
մերժեց առարկելով թէ սգաւոր է և իրեն չվայ-
լեր հանդիսին ներկայ գտնուիլ։ բայց զաւակն
այնքան թախանձեց որ չկըցաւ մերժել անոր ա-
զաշանքը։

Ուստի գնաց հանդիսավայրին մէկ անկիւնը
կծկտեցաւ, բնաւ չյուսալով որ իր զաւակը մրցա-
նակ պիտի կրնար շահիլ, քանի որ այնքան ժա-
մանակ ընդունայն վատնած էր։

Բայց ի՞նչ կը լսէ։ Իր զաւակին, ներսէսի ա-
նունը կը կարդացուի. այն, ներսէս կ'արժանանայ
պսակի։

Խեղճ մայրն ուրախութենէն կ'ուլայ, ինք
որ երկար ատենէ ի վեր տրտմութեան արցունքներ
միայն թափած էր։

Սրահը կը պարպուի և այրին իր զաւակին հետ
դուրս կ'ԱՅԵՒ։

Բայց ի՞նչ. երբ ինքն տան ճամբան բռնել
կ'ուղէ, ներսէս ուրիշ կողմ կը տանի զայն։

Ուր կ'ուղէ տանիլ։

— Եկո՞ւր, կ'ըսեմ, մայրինկ։

Ներսէս մայրը կը տանի իր հօր գերեզմանին
քով և մօրը գտնալով՝

— Ահաւասիկ, կ'ըսէ, հայրս հիմա պսակ ունի։

ԲԱՌԳՐՔՈՅԿ

- | | | |
|----------------------------------|-------|--------------------------------|
| Աղկաղիլ. տկար, ճռզած | [բառ] | Զուարքուն. հրեշտակ |
| Ս.ծեամ. վայրի կենդանի, իւշէ + ս- | | Զուարձընծայ, զուարձալի |
| Անդաղրում. անդաղր | | Հնտել, սովորական |
| Անիար. ջրային տունի մը, որ Հնդ- | | Թանգ. սուղ |
| կատան եւ եղիպսոս կը զըտ- | | Թանցք. փորհարութիւն |
| նուի (Iotus) | | Թափ տակ, ոյժ աալ |
| Առապար. քարուտ տեղուանք | | Թաքքաքուր. պահուցտելով |
| Ասպնջական. հիւրասէր | | Թերուս. պակա ուսում առած |
| Ատոք. լեցուն | | Ժահը. Ցոյն |
| Արանետ. շիտակ ճամբայ | | Ի լող. լողալով |
| Արփային. երկնային | | Լեզեռն. խումբ. գունդ |
| Բազմերան. երանաւէտ | | Խեռո. ըմբռաս |
| Բոյ. խումբ | | Խոպան. անմշակ տեղ |
| Գաղտագոյի. գաղտուկ | | Խորդենի. ընըզ |
| Գեղ. գեղեցկութիւն | | Խուսել, փախչիլ |
| Գեղանի. գեղեցիկ | [բառ] | Խօլական. յիմարական |
| Գուրան, մեծ արօր շատ զոյգ եզնե- | | Ծորիդ. աշնան ճպուռ գիշերային, |
| Գրգորիւն. փափկութիւն | | ծըռչը. ւընելու |
| Գանդաչել, ցնդիլ | | Կամակար. ուզելով |
| Գափ. երածշտական զորժի. Ըեֆ | | Կապարճ. նետի ամսն |
| Գեղեւի. դողդոչել | | Կաղաղակ. Թոչուն, առիւլուն |
| Գիրուի. յափշտակուիլ | | Կիտուած, գոյնզզոյն բանուածք |
| Գմակ, ոչխարի պոչ | | Կիզիլ. կկուզ նստիլ |
| Գոնդոյ. թանձր | | Կմեւպ. հաւկմի կեղեւ |
| Գունչ, անսանոյ ծնօս | | Կողկողապին. ողբազին |
| Եղերերգ. ողբերգ | | Կուսացնել. կուսական ձեւ մը տալ |
| Երկ. վայրի անասուն | | Կուան. ուռ. չե+է |
| Զառամ. ժեր, պառաւական | | Հանգրիճածեւ, ամիոփ, սխմած |
| Զերդ. պէս | | |

Հաստից, ստեղծող
Հեղձաշնչութիւն, շունչը խեղդուկիլը
Հոլանի, մերկ
Հոյլ, խումբ
Ճիւակ, ուրախանալ
Ճուր, ողկոյզ
Ման գալ, պարսիլ
Մարմանդ, հովասուն աեղուանք
Միապաշտ, միակտուր
Միգամած, մութ
Մոյք, նեցուկ, ուրակ+
Ցուռքի, առաստ, պաղաքեր
Շառաւիդ, զաւակ, թռու
Շիք, կաթիլ
Շիկանա, թոչուն, ուժ ուժ-լուի-լու-
Շոք, տաք
Ռիորուտ, ոլոր մոլոր
Ռւոճակիր, աճած
Ռսող, ռաս
Պատառի, փաթթուիլ

Պարեգօտ, կապայ, ժաֆիւն
Պէսպիսակ, պէսպէս
Պղերգ, ծոյլ
Զերին, տաքուկ
Սարտուցիչ, խրաչեցնող
Սիրալի, հրաշալի
Սնդուս, մնտարսէ կուսւ, աթւ-
Սպասարկել, սպասաւորել
Վարս, մազ
Տամկախառն, խոնաւ
Տկոր, խեղճ
Յանգ, միշտ
Յեցքուած, ցեցը կերած
Փանաքի, տկար
Փարբամ, հարուստ
Փիլ, կապոյտ
Փող, սոսակ
Քնքուշ, փափուկ
Օջոշ, երիցուկ, ժաժանիւ-

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

- | | | |
|-----|---|----|
| 1. | Ինչո՞ւ համար պէտք է աշխատիլ | 5 |
| 2. | Առ ուսանող ոմն - Յորդորակ (Յ. Ոսկան) | 6 |
| 3. | Բարի գալոցականը | 7 |
| 4. | Վահրամ | 8 |
| 5. | Պէտք է սիրել աշխատութիւնը | 9 |
| 6. | Հէք այրին | 10 |
| 7. | Բարի պղատիկ տղայ մը | 11 |
| 8. | Խեղճ ուսանող (Պ. Հ. Աղամեան) | 12 |
| 9. | Գետրոս Դուրեան | 13 |
| 10. | Բոյնը (Լուի Թուննեիկ) Թարգմ. Զ. Կ. Տ. | 14 |
| 11. | Գարուն (Հ. Դ. Աղիշան) | 15 |
| 12. | Կաթնավաճառ կինն ու կաթնաման (Բազմալիպ) | 17 |
| 13. | Զուրը, կրակը եւ պատիւը | 19 |
| 14. | Խարուած կարապը (Եղի Գաբրոյ) Թարգմ.
Եղիշէ Ծ. Վ. Դուրեան | 19 |
| 15. | Պղտիկ բարի աղջիկը | 20 |
| 16. | Ուսանողի նամակը (Պ. Հ. Աղամեան) | 21 |
| 17. | Աստուած ամէն բանի պաշտպանէ (Հ. Դ. Աղիշան) | 23 |
| 18. | Խղունջն (Հ. Բ. Վ. Քուշներեան) | 24 |
| 19. | Աղբիւրը | 25 |
| 20. | Խաղողը (Զապէլ Կ. Տօնեկան) | 26 |
| 21. | Հանիիս ճախարակը | 28 |
| 22. | Առ մայրն որդեկորայս (Վ. Հիւլօ) Թարգմ. Ե. Վ. Դ. | 30 |
| 23. | Գիշեր (Հ. Դ. Աղիշան) | 31 |
| 24. | Մեղրիկին հարցումը | 34 |
| 25. | Եռանդով կատարենք մեր պարտքը | 34 |

26.	Մղրիդ (Հ. Ք. Վ. Քուշներեան)	35
27.	Անզաւակ եղնիկը	37
28.	Կիկօ (Պ. Հ. Աղամեան)	38
29.	Սահակ թռչունը (Յովի. Գագանձեան)	40
30.	Կատու եւ շուն (Յ. Ղ. Ճ.)	42
31.	Բասթէու	46
32.	Զմեռն (Աղեխ. Գ. Փանոսեան)	48
33.	Զմեռն (Հ. Ղ. Աղիշան)	49
34.	Կարուակն ու մեծատունը Հետեւ ողութիւն Զ. Կ. Տ.	50
35.	Երկրագործը եւ եկքանիկը	51
36.	Ամենայն սուրբք (Վահան Ծ. Վ. Տեր Մինասեան)	53
37.	Ամէն փոքր աղջիկներ քոյր են մէկմէկու	54
38.	Կապիկ, էշ եւ խլուրդ (Հ. Ք. Վ. Քուշներեան)	57
39.	Ոչխար	57
40.	Նոր տարին	59
41.	Յովհաննէս Այլվազովսկի (Կ. Տիրեան)	60
42.	Դժգոհ Փիլիկ (Վահան Ծ. Վ. Տեր Մինասեան)	61
43.	Պատուական տունկը (Շմիշ)	62
44.	Զիւնը (Կարօ)	63
45.	Աղրեցութիւն եւ խաղամոլութիւն	64
46.	Աստուած	66
47.	Հարիսային աւանդութիւնը	67
48.	Նորածին (Մ. Աճեմեան)	67
49.	Նեւտոնի շունը	69
50.	Աղաւնի եւ կաչաղակ (Հ. Ք. Վ. Քուշներեան)	70
51.	Խե՛քն մեծ հայր	71
52.	Իրերու տիմրութիւնը (Հ. Քազալիս) Թրդ. Զ. Կ. Տ.	72
53.	Հէքեաթ (Ռ. Զարդարեան)	73
54.	Նասպատակ (Աղեխ. Գ. Փանոսեան)	74
55.	Գէորգ Սթէֆէնսըն	75
56.	Ճնճղուկն ու նապաստակը (Աղեխ. Գ. Փանոսեան)	76

57.	Խղճի քննութիւն	77
58.	Մամուկն ու շերամը (Աղեխ. Գ. Փանոսեան)	78
59.	Պապիկն ու հանին	79
60.	Որթատունին ու կնձնին (Աղեխ. Գ. Փանոսեան)	80
61.	Պարտքը նուիրական բան մ'է	81
62.	Մայրիկին երգը (Թարգմ. Հ. Արս. Ղաղիկեան)	82
63.	Զարնուած որսորդը (Ռ. Զարդարեան)	83
64.	Միականի՛ (Յ. Սերեեան)	85
65.	Սոխակ	87
66.	Իլմէն լձին զրոյցը (Ե. Ծ. Վ. Դուրեան)	88
67.	Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ	90
68.	Տրամախօսութիւն. Գանգատող ուսանողուհիք (Աղեխ. Գ. Փանոսեան)	92
69.	Լօշտակ բոյս	99
70.	Եղնիկ	100
71.	Արմաշ գիւղը (Յ. Գ. Մ.)	103
72.	Եկեղեցականն (Ռ. Յ. Պերսկրեան)	106
73.	Երախտագիտութիւն	107
74.	Աքծանող	108
75.	Պսակը	101

3372
2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0291546

ԳՐԱՏՈՒՅՔ Պ. Պ. ՊԱԼԵՆՑ

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԱՏ

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԴՅՈՅ

ՆԱԽԱԿՐԹԱՐՄԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒՄ

Թիւ 20. Զամանակար եզրացու, Կ. Պող.

fuu

Ա.ՅԵՐԵՆ, Գաղ. լեզուի Հայ. բացատրութեամբ	Դ. Թիրզկան	1
Ա.ՀԱՅԱՀԱՊՐՈՒԹԻՒՆ, պահէեր սպարդ	Տ. Պօղաճեան	5
ԲԱՆԱԿԻ ԸՆԴԱՐՁԱԿ ԹՈԽԱԲՑ. ՀՈՒԹԵԱՆ		12
ԲԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՌՈՒԹԵԱՆ ՕԼԻՎՈՐՃ		5
ԲԱՆԱԲՐԱՆ Հայ. Գալդ.	Կ. Ասկենան	25
ԲԱՌԱԳԻՑՈՒԹԻՒՆ	Եղիշէ Ծ. Վ. Դուռինան	3
ԳԱՐԳԱՑՈՒԹԻՒՆ ԱՌԱԽԵՈՎ	Ե. Մարտանի	8
ՄՐԱԽԱՅԵՐԻՑ, ԲԱԽԱՏԵՂՋԱԿԱՆ ԵՎ ԹԱՏԵԿՊԱԿԱՆ ԽՐՃԱԿ		
ԵՎ ԱՊՋԱԽՓԵԼ ԳՐՈՒԹՈՒ	Դ. Էջմիեջկան	7 20
ՔՆԹԱՑՔ Ի ԴՐՈ ԾԱՐԺԱՌՈ. Ա. Տարի	Ե. Ծ. Վ. Դուռինան	5
» » » Բ. » »		7 20
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԲԻՋԱՐՃԱԿ	Տ. Պօղաճեան	15
ԹՈՉՆԱՍՈ. ՆՈՂԻԿ	Ս. Ֆելիքսի	2
ԽՐԱԳԱՑՈՒԹԻՒՆ ԲԻՋԱՐՃԱԿ	Ե. Թէյկան	6
ԾԱՂԿԱՓՈԽԵԶ ԿԱՄ ՊԱՏԿԵՐԱՎԱՐԴ ԵՆԵ ՐԵԲԵԳԱՐԱՆ		
	Ս. Հ. Ֆելիքսի	2
Դ.ԱԽԱՏԱՐԵՐԸ ԲԱԽԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՎԱՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱԿԸ, Ա. Տարի	Ե. Թէյկան	5
Միջին թիրաց		6
ՏԱՂԱՋԱՓՈԽԵՒՆ	Դաւագինան	2 20
»	Ե. Գուրզեան	3
ՏԱՐԵՐԴ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ, Ա. Տարի		8
» » »		5
» » »		5

Գի 4 Ար.

مغارف عمومیه نظارت جلیله سنک ۱۲ صیفر ۴۱۶ و ۴ تموز ۲۱۴
تاریخی و ۳۴۱ نوسرویی رخصتیا، سیله طبع اوئنستدر